

6905

КАТИХИЗИСЪ

28(075)

5-38

1-1 OCT 2009

280 28 (075)
 1028-55 S-38
 և

ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՅՈՒ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ

ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏ-ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ

Չորրորդ տպագրություն 7/11-1922

Աշխատասիրեց

Կրօնառարկայի Թիֆլիսի Առաջին արական գիմնազիայի

Ե Ի

Վաղեմակի կորպուս-ի

ԳԱՐՐԻԷԼ ԱԻԱԳ ԴԱՀ, ՏԷՐ-ԳԱՐՐԻԷԼԵԱՆՑ

Ի հալրապետութեան Տեառն Տեառն Մատթէոսի Բ. Սրբազնա-
 դոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց

ՏԳԱՐԱՆ Յ Մ. ՌՕՏԻՆԵԱՆ.

ԹԻՖԼԻՍ, 1910

1005
 20429



Համաձայն պատուիրանի վեհափառ Հայրապետի ազգիս ընթերցեալ զայս ծեռնարկ «Քրիստոնէական վարդապետութեան» չգտի 'ի սմին-ինչ հակառակ ընդդէմ դաւանութեան Հայաստանեայց առաքելական Ս. եկեղեցւոյ, ուստի չիք արգելք տալագրութեան սորին:

Ի 6 Յուլիսի 1894 թի Ս. Եջմիածին

Նախագահ Արիստակէս Եպիսկոպոս

ԹԻԻ 101

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Թիֆլիսի առաջին արական գիմնազիոնի կրօնուսուց լինելով և 'ի նկատի ունենալով' որ վերին դասարանների աշակերտները՝ կրօնի լարմար դասագրքերի բացակայութեան պատճառով, շատ դժուարութիւնների են հանդիպում Հայոց եկեղեցու Քրիստոնէական վարդապետութիւնը սովորելիս, հարկաւոր համարեցի Սալանթեանցի «Արօնագիտութիւն» և Մսերի '«Հրահանգ Քրիստոնէական հաւատոյ» դասագրքերից օգուտ քաղելով՝ կազմել «Քրիստոնէական վարդապետութիւն Հայոց առաքելական սուրբ եկեղեցու» անունով մի դասագիրք, որ իր բովանդակութեամբ և ծաւալով լարմար լինի աշակերտներին համար:

Դասագրքիս մէջ բացի «Նիկիական հանգանակ»-ից գրել եմ և մեր եկեղեցու ուղղափառ հաւատի «դաւանութիւն»-ը, որ աշակերտներն անպատճառ պէտք է սերտեն, 'ի հարկէ ուսուցչի կարևոր բացատրութիւնների օժանդակութեամբ:

Թէ որքան նպատակիս եմ հասել, ալդ ցոյց կըտալ անաչառ քննադատութիւնը, որի ամեն մի ցոյց տուած նկատողութիւնն լարգանքով կընդունի:

Աշխատասիրողը:

Մայիսի 3, 1894 թ.

Թիֆլիս:

ԴԱՍԱԳԻՐՔԱԹՈՅԼԱՏՐՈՒԱԾ Է

Ազգիս Վեհափառ Հայրապետի պատուիրանի համաձայն՝ թ. 1446, 30 օգոստոսի 1894 թուի, հայոց եկեղեցական ծխական ուսումնարաններում գործադրելու համար, իսկ պետական միջնակարգ դպրոցներում՝ Կովկասեան դպրոցական շրջանի պ. հոգաբարձուի գրութեամբ՝ թ. 8645, 31-ն հոկտեմբերի 1894 թուի:

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական վարդապետութիւնն այն ուսումնական է, որ ինքն Յիսուս իր մկրտութիւնից յետոյ՝ երեք ու կէս տարի ուսուցանում էր մարդկանցս՝ ինչպէս որ սուրբ գիրքն ասում է՝ «Յիսուս սկսեց գործել և սովորեցնել» Գործք Առ. 1. իսկ յետոյ առաքեալներն ու սրանց յաջորդները թէ խօսքով, թէ գրով և թէ գործով սովորեցնում էին այն բոլոր ճշմարտութիւններն՝ ինչ որ Յիսուսից սովորել էին. Յիսուս առաքեալներին պատուիրեց՝ «Սրանից յետոյ գնացէք, աշակերտ դարձրէք բոլոր հեթանոսներին, սովորեցրէք նրանց պահել այն բոլորն, ինչ որ ես ձեզ պատուիրեցի» Մատթ. ԻԸ 19—20: Եւ թէ Պօղոս առաքեալն ասում է՝ «Հաստատ եղէք և պինդ պահեցէք այն բոլոր աւանդութիւնները, որ սովորեցիք թէ խօսքով և թէ մեր թղթով»:

Յիսուս մեզ սովորեցնում է ճանաչել ճշմարիտ Աստծուն, հաւատալ Նրան և սիրել—կատարել նրա պատուիրանները, որ աշխարհիս վրայ երջանիկ ապրենք և ժառանգենք յաւիտենական կեանքը: Այսպէս

է ասում Յիսուսը՝ «Ով լսում է իմ խօսքն և հաւատում է նրան, որ ինձ ուղարկեց, այնպիսին ընդունում է յաւիտենական կեանքը» Յով. Ե. 24:

«Յաւիտենական կեանքն այս է, որ քեզ ճանաչեն միայն ճշմարիտ Աստուած, և Յիսուս Քրիստոսին, Որին ուղարկեցիր» Յով. Ժ. 3:

Հ Ա Ի Ա Տ

Հաւատն Աստծուց մեզ պարզեւած մի ներքին լոյս է, շնորհ է, որով կարողանում ենք ճանաչել, ընդունել և խոստովանել այն Աստուածային յայտնութիւնները—ճշմարտութիւնները, որ Աստուած պարզեւել է մարդկանցս փրկութեան համար:

Մենք պէտք է հաւատանք աստուածային յայտնութիւններին հենց այն պատճառով, որ նրանք մեզ տուած են արդար և ճշմարիտ Աստծուց:

Հաւատն՝ որ ներքին շնորհ է, քրիստոնեայն պարտաւոր է արտայայտել գործով և խոստովանել բերանով: Քրիստոս ասում է՝ «Ոչ թէ նա, որ ասում է ինձ Տէր, Տէր, կը մտնի երկնքի արքայութիւնն, այլ նա, որ կատարում է իմ հօր կամքը, որ երկնքումն է» Մատթ. Է. 21, և թէ՛ «Հաւատն առանց գործի մեռած է» Յակ. Բ. 23:

Քրիստոնէական հաւատի հիմն է ինքն Յիսուս Քրիստոս, որի միջոցով Աստուած խոստացաւ փրկել մարդկան ազգը յաւիտենական դատապարտութիւնից՝ Ազամի մեղքից. այս խոստումն Աստուած արեց նախ՝ առաջին մարդկանց, նրանց դրախտից արտաքսելու

ժամանակ՝ օձին ասելով՝ «Թշնամութիւն եմ դնում քո և այդ կնոջ մէջ, քո և նրա զաւակի մէջ. նա կը սպասի քո գլխին, և դու՝ նրա զարշապարին» գ. ծննդ. Գ. 15. յետոյ՝ նահապետներին, Մովսէսին և միւս մարգարէներին՝ «Շատ մասերով և շատ օրինակներով Աստուած մեր հայրերի հետ առաջուց խօսեց մարգարէներով, իսկ այս վերջին օրերս՝ մեզ հետ խօսեց իր Որդու միջոցով» Եբր. ա. 1—2:

Քրիստոնէական հաւատը կայանում է նոյն իսկ «Քրիստոսի երկրպագութեան և նրա պատուիրանների» կատարման մէջ:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քրիստոնէի հաւատը պէտք է լինի «լուսաւոր, հեզ, հաստատ և կենդանի»:

ա. Քրիստոնէի հաւատը «լուսաւոր» է, երբ նա միշտ ուսումնասիրում է սուրբ գիրքն, ուսանում է նրա մէջ եղած աստուածային ճշմարտութիւններն և Աստծու ու մարդկանց վերաբերեալ բոլոր պարտականութիւնները՝ «Քննեցէք զբերը, որոնցով դուք կարծում էք յաւիտենական կեանքն ունենալ» Յով. Ե. 39:

բ. Քրիստոնէի հաւատը «հեզ» է, երբ սուրբ Գրքի մէջ պարունակած մարդկային մտքին անհասանելի աստուածային խորհրդներին և ճշմարտութիւններին կը հաւատայ հեզութեամբ, ինչպէս որ Գաւիթ մարգարէն իր համար վկայում է՝ «Հաւատացի, ինչ որ խօսեցի և ես շատ խոնարհ եղայ» Սաղ. ՃԺԷ:

գ. Քրիստոնէի հաւատը «հաստատ» կլինի, երբ նա ամբարիշտ մարդկանց դատողութիւններից, օրինակներից և գայթակղելի գործերից չի գայթակղուիլ, անշարժ կըմնայ իր հաւատալիքի մէջ և աշխարհի նեղութիւնների ու փորձանքների տակ չի ընկճուիլ, այլ կըզօրանայ ինքն իր հաւատով, ինչպէս որ Պօղոս առաքեալը պատուիրում է՝ «Դուք այնպէս նրա վրայ արմատացած և հաստատուած էք ու հաւատի մէջ ամրապնդած, ինչպէս որ սովորել էք» Պօղ. առ. Կող. բ. 7:

դ. Քրիստոնէի հաւատը կենդանի է, երբ նա ունենում է այն ամեն բարի գործերը, որ պահանջում է մեր հաւատն, ինչպէս որ Յակովբե առաքեալը ասում է՝ «Ի՞նչ օգուտ, սիրելի եղբայրներս, եթէ մէկն ասի, թէ հաւատ ունիմ, բայց գործ չունի. մի՞թէ հաւատն առանց գործի նրան կեանք կը տայ... հաւատն առանց գործի մեռած է»։ Յակ. բ. 14, 29:

ՀԱՒԱՏԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Քրիստոնեայն հաւատով մօտենում է Աստծուն և խաղաղութիւն ու արդարութիւն է հաստատում իր և իր Արարչի մէջ, ինչպէս որ Պօղոս առաքեալն ասում է՝ «Սրանից յետոյ՝ մենք հաւատով արդարացածներս՝ խաղաղութիւն պահենք Աստծու հետ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով»։ Հռով. Ե. 1.

Քրիստոնեայն հաւատով որդեգրվում է հօր Աստծուն, ինչպէս որ Պօղոս առաքեալն ասում է՝ «Դէպի

Յիսուս Քրիստոս ունեցած հաւատով ամենքդ էլ Աստծու որդի եք»։

Քրիստոնեայն հաւատով ստանում է յաւիտենական կեանքն, ինչպէս որ Քրիստոս ասում է՝ «Ով նրան կը հաւատայ, չի կորչիլ, այլ յաւիտենական կեանքը կընդունի» Յով. Գ. 19.

Քրիստոնեայն հաւատով բնակեցնում է իր մէջ Յիսուսին, որ է կտարեալ երջանկութիւն և յաւիտենական կեանք՝ «Ով կուտի իմ մարմինն և կը խմի իմ արիւնը, նա կը բնակի իմ մէջ և ես նրա մէջ»։ Յով. 2. 57:

Քրիստոնեայն հաւատով զօրանում է յաղթող լինելու աշխարհի և իր մարդկային չար ձգտումների դէմ՝ «Ով Աստծուց ծնուած է՝ յաղթում է աշխարհին. և այս յաղթութիւնը մեր հաւատն է, որով յաղթում ենք աշխարհին» Ա. թ. Յով. Ե. 4:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ—ՍՈՒՐԲ ԳԻՐՔ

Քրիստոնէական հաւատի ճշմարտութիւնները (յայտնութիւնները) գտնվում են Աստուածաշունչ—Սուրբ գրքի մէջ, որ Սուրբ Հոգւով գրել են Աստծուց ընտրուած մարդիկ՝ Մարգարէներն և Առաքեալները։

Ս. Գրքի այն մասը՝ որ գրուեց Քրիստոսից առաջ մարգարէների ձեռքով, անուանվում է «Հին կտակարան», իսկ Քրիստոսից յետոյ գրուածն առաքեալների ձեռքով՝ կոչվում է «Նոր կտակարան»։

Հին կտակարանում Աստուած խոստանում է մեզ, որ մարդկանց Ադամի մեղքից՝ յաւիտենական դատա-

պարտութիւնից ազատելու համար կ'ուղարկի իր Միածին Որդուն. և այս խոստումով Աստուած մինչև Փրկչի գալը մարդկանց սիրտը նախապատրաստեց օրինակներով ու մարգարէներէ միջոցով խոստացած Փրկչին ընդունելու:

Այս խոստումն, ալլև աստուածային հրամանները, պատուէրներն, աստուածպաշտութիւնն և նշանաւոր անցքերի պատմութիւններն Ադամից մինչև Մովսէս մարգարէն բերանացի աւանդութեամբ էր պահուում հրէից ազգի մէջ:

Նոր կտակարանը վկայում է, թէ Աստուած իրաւի շնորհեց մարդկանց իր Միածին Որդին, որ է «Յիսուս Քրիստոս»:

Հին կտակարանը պարունակում է քառասուն և հինգ (45) գիրք և իր բովանդակութեամբ չորս կարգի է բաժանւում:

1. Օրինադրական գրքերը՝

Մենդոց, Նւից, Աւտացոց, Թուոց և Ներկորդ օրինաց, որոնք աշխարհիս ստեղծագործութիւնից մօտ 4000 տարի յետոյ գրուած են Մովսէս մարգարէի ձեռքով և կոչւում են Մովսէսի օրէնք (թօրա) կամ հնգամատեան, որոնք պարունակում են հին օրէնքներն, Աստծու խոստումներն և ուխտը,

2. Պատմական գրքերը

Յեսուայ, Դատաւորաց, Հռութայ, Թաղաւորաց, Մնացորդաց, Նգրասայ, Նեեմայ և Նսթերայ, որոնք գլխաւորապէս պարունակում են բարեպաշտ և առաքինի մարդկանց պատմութիւնները:

3. Բարոյական կամ վարդապետական գրքերը Յովբայ, Դաւթի և Սողոմոնի

որոնք պարունակում են Աստուածգիտութեան ուսումն և մարդկային կեանքին վերաբերեալ կանոններ և խրատներ:

4. Մարգարէական գրքերը.

Նաչիայի, Նրեմիայի, Նգեկիէլի, Դանիէլի և մրւս տասներկու փոքր մարգարէների

որոնք պարունակում են մարգարէութիւններ և գուշակութիւններ Յիսուս Քրիստոսի տնօրէնութիւնների մասին:

Տնօրէնութիւն ասելով պիտի հասկանանք՝ Քրիստոսի չղութիւնը, ծնունդը, մկրտութիւնը, քարոզութիւնը, հրաշագործութիւնը, չարչարանքը, մահը, լաւութիւնը, համբարձումն և չոր աջ կողմը նստիլը:

Նոր կտակարանը պարունակում է քսան և եօթն (27) գիրք և իր բովանդակութեամբ նա էլ չորս կարգի է բաժանւում.

1. Օրինադրական գրքերը,

որ գրել են Մատթէոս, Մարկոս, Աուկաս և Յովհաննէս աւետարանիչները՝

կոչւում են Աւետարան, որովհետև բարութեան և փրկութեան աւետիք են պարունակում, այսինքն աւետում են մարդկութեանն Փրկչի գալուտը, Նրա ձեռքով եղած գերագոյն բարիքը, Նրա երկրաւոր կեանքի պատմութիւնը, Նրա հրաշալի գործերը, Նրա փրկւարար և կենդանարար վարդապետութիւնները, վեր-

Ղապէս Նրա մահը խաչի վրայ, փառաւոր յարութիւնըն և սքանչելի համբարձումն:

Թէև չորս աւետարանիչներն էլ խօսում են Յիսուս Քրիստոսի մասին, սակայն ամեն մի աւետարանն իր առանձնաշաղկութիւն ունի, նախելով թէ՛ որ եկեղեցու համար է զըրուած և թէ ինչ նպատակով: Այսպէս՝ Մատթէոսն՝ իր աւետարանը գրելով հրէութիւնից դարձած քրիստոնեաների համար Քրիստոսի համբարձումից 8 տարի լետոյ, գլխաւորապէս խօսում է թէ՛ Յիսուս Քրիստոս հէջ ակն Մեսսիան է, որ Աստուած խոստացել էր հրէից ազգին, ուստի նա սկսում է Յիսուսի ճիւղազրուութիւնն Արահամից ու Դաւթից և ցոյց է տալիս՝ որ Նրա վրայ կատարուեցան Անսիալի մասին եղած բոլոր գուշակութիւնները: Մարկոսը գրեց համբարձումից 15 տարի լետոյ հեթանոսութիւնից դարձածների համար, ուստի նրանց Յիսուսի աստուածութեան մէջ համոզելու համար զըլխաւորապէս պատմում է նա Յիսուսի հրաշագործութիւնների մասին: Դուկասը գրեց համբարձումից 17 տարի լետոյ, նա աւելի մանրամասն և հետևողութեամբ է խօսում Յիսուսի երկրաւոր կեանքի մասին, որպէս զի հաւատացեալներին քրիստոնէական հաւատի մէջ ամրապնդէ: Յովհաննէսն իր աւետարանը նախընթաց աւետարաններից շատ ուշ գրելով—համբարձումից 53 տարի լետոյ—նշանաւոր կերպով լրացնում է առաջին երեք աւետարանների բովանդակութիւնն և աշխարհի Փրկչի աստուածալին արժանաւորութիւնը բացատրում է մի առանձին ոգով:

2. Պատմական. — Գործք առաքելոց գիրքն է, որ գրել է Դուկաս աւետարանիչը Թէոփիլէսի խնդիրով և պատմում է Սուրբ Հոգու իջնելն առաքեալների վրայ և Քրիստոսի եկեղեցու սկզբնական վիճակը: Գլխաւորապէս խօսում է Պետրոս և Պողոս առաքեալների քարոզութիւնների մասին:

3. Բարոյական կամ վարդապետական գրքերը.

Կաթողիկեաց կամ ընդհանրական եօթն գիրքն՝ որոնցից մէկը գրեց Յակովբոս առաքեալն. երկուսը՝ Պետրոս առաքեալն. երեքը՝ Յովհաննէս և մինը՝ Յուդա առաքեալն. այլև Պողոս առաքեալը գրեց տասն և չորս մասնաւոր թղթեր—մինը՝ Հռովմայեցւոց, երկուսը՝ Կորնթացւոց, մինը՝ Դադատացւոց, մինը՝ Եփեսացւոց, մինը՝ Փիլիպեցւոց, մինը՝ Կոլոսացւոց, երկուսը՝ Թեսաղոնիկեցւոց, երկուսը՝ Տիմոթէոսին, մինը՝ Տիտոսին, մինը՝ Փիլիմոնին և մինն՝ Եբրայեցւոց, որոնք Աւետարանում աւանդած հաւատի վարդապետութիւնների բացատրութիւններն և մեկնութիւններն են.

4. Մարգարէական. — Յովհաննու յայտնութիւնը, որ նկարագրում է Քրիստոսի եկեղեցու ապագայ փառաւոր վիճակը:

Թէ հին և թէ նոր կտակարանի գրքերը, որոնք, թուով 72 են, որոշուած են Սիրոն Կաթողիկոսի օրով 768 թ. Պարտաւ քաղաքում գումարած Ժողովի մէջ:

Հին կտակարանը գրուեց եբրայեցերէն. Դանիէլի գրքի մի քանի գլխերը՝ քաղղէացւոց լեզուով. նոր կտակարանը լունարէն: Ամենից առաջ թարգմանուեց հին կտակարանը Փարոս կղզու վրայ Պողոմէոս Զիլադելֆոսի օրով 271 թուին Քրիստոսի ծննդից առաջ լունարէն. այս թարգմանութիւնը կոչվում է եօթանասունների թարգմանութիւն, որից թարգմանուած է մեր Աստուածաշունչը Սուրբ թարգմանիչների ձեռքով 436 թուին:

ՀԱԻԱՏԻ ՀԱՆԳԱՆԱԿ

Այն բոլոր ճշմարտութիւնները, որոնք պէտք է լինին քրիստոնէի հաւատալիքները՝ բովանդակած են

համառօտակի հաւատի հանգանակի մէջ, որի աղբիւրը սուրբ գիրքն է:

Քրիստոնէութեան սկզբներում, ինչպէս Յիսուս աւանդել էր, հաւատի հանգանակը կամ հաւատամքը կայանում էր միմիայն հետեւեալ խօսքերի մէջ՝ «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ», (Մատթ. ԻԸ. 20). ուրեմն հանգանակի էական մասերն են՝ Հայր, Որդի և Սուրբ հոգի. այլև Յիսուս այս պաշտելի անունների հետ աւանդեց և հետեւալը՝ «Սովորեցրէք նրանց պահել այն բոլորն, ինչ որ պատուիրեցի ձեզ, և ահա ես ձեզ հետ եմ ամեն օր՝ մինչև աշխարհի վերջը» (Մատթ. ԻԸ. 20): Այս համառօտ հանգանակով առաջին դարերի քրիստոնեաները բաւականանում էին. առաքելներն և աշակերտներն էլ նրա պատուէրի համաձայն սկզբումն աւանդում էին բանաւոր և յետոյ՝ թէ բանաւոր և թէ գրով: Բայց երբ քրիստոնեաների միջից այնպիսի մարդիկ դուրս եկան, որոնք մոլոր վարդապետութիւններ էին քարոզում Քրիստոսի աստուածութեան, անձնաւորութեան և մարդեղութեան դէմ, այլև Սուրբ Հոգու աստուածութեան դէմ, ուստի հարկ զգացուեց այդ մոլար վարդապետութիւնները (հերետիկոսութիւն) հերքելու համար այն ժամանակի բոլոր քրիստոնեայ եկեղեցիներին ներկայացուցիչներից ժողով կազմել. այսպիսի ժողովն աւուանվում է տիեզերական, որոնք մի քանիսն են եղել, սակայն մեր եկեղեցին ընդունում է առաջինների արեւելեան ժողովների վճիռները:

Առաջին տիեզերական ժողովը գումարուեց 325 թ. Բիւթանիայի Նիկիա քաղաքում, ուր ներկայ էին

318 հայրապետներ և Սուրբ հոգու ներշնչմամբ ու միաբան հաւանութեամբ հերքելով Աղէքսանդրացի յոյն Արիոսի մոլար վարդապետութիւնը գրեցին հետեւեալ հանգանակը.

«Հաւատամք ի մի Աստուած հայր ամենակալ, արարիչ ամենայն երևելեաց և աներևոյթից. Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, ծնեալ ՚ի Հօրէ միածին, ախնձն լէութենէ Հօր. Աստուած լԱստուծոյ, Լոյս ՚ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ լԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ, ոչ արարեալ, համագոյակից Հօրն: Որով ամենայն ինչ եղև որ յերկինս և որ ՚ի վերայ երկրի: Որ չաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ, մարմնացեալ և մարդացեալ, չարչարեալ և չարուցեալ չերորդ աւուր. և ելեալ յերկինս և դալոց է միւս անգամ դատել զկենդանիս և զմեռեալս: Եւ ի հոգին Սուրբ, Իսկ որք ասենն, էր երբեմն, չորժամ ոչ էր, և մինչև ծնեալ ոչ էր, և թէ լոչէից եղև, կամ չալմէ ենթակալութենէ կամ լէութենէ ասեն լինել, կամ ստեղծական կամ ալլալելի, կամ փոփոխելի զՈրդին Աստուծոյ. զնոսա նշովէ կաթողիկէ և առաքելական եկեղեցի»:

Այս ժողովին մեր եկեղեցու ներկայացուցիչն էր սուրբ Գրիգոր Լուսաւորչի որդին՝ սուրբ Արիստակէս, որ վերադառնալով Հայաստան իր հետ բերեց Նիկիայի հանգանակն և (20) քսան յոդուածով կանոններ:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը 326 թուին ազգային ժողով գումարեց Վաղարշապատում և այնտեղ կանոններն ու հանգանակն ընդունելուց յետոյ՝ վրան աւելացրեց—ասելով՝ «Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջ քան զյաւիտեանս երկիրպագանելով սրբոյ Նորորդութեան, և միոյ Աստուածութեան—Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս

յաւիտենից ամէն», որ միայն մեր եկեղեցու մէջ է կարգացվում:

Երկրորդ տիեզերական ժողովը գումարուեց 381 թուին Կոստանդինուպոլսում, ուր ներկայ էին 150 հայրապետներ, որոնցից մինն էր մեր հայրապետ Ներսէս Մեծը: Այս ժողովը հերքեց Կ. Պօլսի Մակեդոն պատրիարքի Սուրբ հոգու դէմ քարոզած հերետիկոսութիւնն և Նիկիական հանգանակի վրայ յաւելումն անելով կազմում է Կ. Պօլսի ժողովի հանգանակը:

«Հաւատամք 'ի մի Աստուած, Հայրն ամենակալ, արարիչ երկնի և երկրի, երեւելաց և աներևութից, Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստուծոյ միածին, 'ի Հօրէ ծնեալ յառաջ քան զամենայն յաւիտեանս. Աստուած լ'Աստուծոյ, Լոյս 'ի Լոյսոյ, Աստուած ճշմարիտ լ'Աստուծոյ ճշմարտէ, ծնեալ, ոչ արարեալ, համադուակից հօրն: Որով ամենայն ինչ եղև յերկինս և յերկրի: Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացեալ 'ի հոգւոյն սրբոյ եւ 'ի Մարիամայ կուսէն եւ ներմարդացեալ, խաչեալ վասն մեր առ Պօստոցի Պիղատոսն և չարչարեալ և թաղեալ և յարուցեալ յերրորդ աւուր ըստ գրոց և ելեալ յերկինս և նստեալ ընդ աջէ հօրն, և գալոց է միւս անգամ հանդերձ փառօր, դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թաղաորութեան ոչ ելիցի վախճան: Եւ 'ի հոգին Սուրբ, Տէրն, Կենդանարարն, 'ի Հօրէ ելողն, ընդ Հօր և Որդւոյ երկրպագակիցն և փառաւորակից, որ խօսեցաւ մարդարէիւք: 'ի մի սուրբ կաթողիկէ առաքելական եկեղեցի: Խոստովանիմք 'ի մի մկրտութիւն, 'ի քառութիւն մեղաց: Ակն ունիմք չարութեան մեռելոց և կենաց հանդերձեալ յաւիտենից, ամէն»:

Երրորդ տիեզերական ժողովը գումարուեց 431 թուին Եփեսոսում 200 հայրապետների ներկայութեամբ. այս ժողովը հերքեց Կ. Պօլսի Նեստոր պատրիարքի մոլորութիւնը: Այս ժողովին թէև մեր հայ-



րապետն ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒԻ անձամբ էլ մեր հայրապետ Ներսէսին և իր ընդհանրական շնորհակալութիւնը հայտնի դրեց: Նկատելի է, որ Պօլսի ժողովը, որը ընդունեց Նիկիական և Մակեդոնական վարդապետների դեմ դրած անգործութիւնը:

Մեր եկեղեցին Նիկիայի սուրբ ժողովի հանգանակն ընդունելով՝ տեղ-տեղ կարեւոր յաւելումներով պարզաբանել է, մասամբ սուրբ Լուսաւորչի և մասամբ էլ նրա սուրբ յաջորդների ձեռքով՝ Եփեսոսի տիեզերական ժողովից առաջ: Բոլոր բացատրութիւնները, կամ յաւելումները մեր սուրբ հայրապետները վերցրել են Կ. Պօլսի առաջին ժողովի կազմած հանգանակից:

Մեր եկեղեցու Նիկիական հանգանակը կարգացվում է այսպէս՝ որ բաղկացած է տասներկու մասերից:

1. «Հաւատամք 'ի մի Աստուած, 'ի Հայրն ամենակալ, յՍրարիչն երկնի, և երկրի, երեւելաց և աներևութից:

2. «Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն յէութենէ Հօր. Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած. նոյն ինքն 'ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ յերկրի, երևելիք և աներևոյթք:

3. «Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ Սրբոյ կուսէն, Հոգւովն սրբով, որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և

1005
20492

դամենայն որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք:

4. «Չարչարեալ, խաչեալ, թաղեալ:

5. «Յերրորդ աւուր յարուցեալ:

6. «Ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր:

7. «Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան:

8. «Հաւատամք և 'ի սուրբ Հոգին, յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս. որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքելն և բնակեցաւ 'ի սուրբան:

9. «Հաւատամք և 'ի մի միայն, ընդհանրական և առաքելական եկեղեցի:

10. «'Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քառութիւն և 'ի թողութիւն մեղաց:

11. «'Ի յարութիւն մեռելոց:

12. «'Ի դատաստան յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւն երկնից, և 'ի կեանս յաւիտենականս»:

Իսկ որք ասենն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ թէ՛ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին, և թէ փոփոխելիք են, կամ այլալիք, զայնպիսիսն նշովէ կաթողիկէ և առաքելական սուրբ եկեղեցի:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՌԱՏ

ԱՍՏԾՈՒ ԳՈՅՈՒԹԻՒՆ, ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ
ԵՐԵՔ ԸՆՁԵՐ

«Հաւատամք 'ի մի Աստուած.....».

Այս խօսքերով խոստովանում ենք, որ Աստուած կայ՝ «Երկնքում Աստուած կայ» ա. Մակ. ԺԵ. 3, և «մի» է, ինչպէս որ վկայում է սուրբ Հոգին Մովսէս մարգարէի բերանով՝ «Լսիր, Իսրայէլ, որ մեր Տէր Աստուածը, Տէր մի է»։ Բ. օրինաց. 2. 4, և Պօղոս առաքելը թէ՛ «Չկայ մի ուրիշ Աստուած՝ բացի մէկից» Ա. Կորնթ. Ը. 4». Իսկ թէ Աստուած ինչ է, մեզ անհասկանալի է նրա գոյութիւնը կամ ընչութիւնը. միայն Սուրբ Գրքից գիտենք, որ Աստուած «Հոգի է, սէր է». Յովհ. Դ. 24:

Ամեն մի կրօնի հիմքը կազմում է Աստծու գոյութիւնը, այս ճշմարտութեան մէջ մարդկային ազգը միշտ համոզուած է եղել: Չկայ և չի եղել մի այնպիսի ժողովուրդ երկրիս վրայ».

որ այս կամ այն ձևով մի որևէ գաղափար չունենալ Աստծու մասին. միմիայն անմիտը կարող է ասել, որ Աստուած չկալ (Սաղմ. ԺԳ. 1):

Աստծու գոյութիւնը կարող ենք հաստատել նախ՝ Տիեզերքով: Ներկրիս վրայ ոչ մի բան ինքն իրան կամ դիպուածով առաջ չէ եկել, այլ հետեանք է մի պատճառի. աշխարհիս գոյութիւնն էլ ենթակալ է այս օրէնքին, ուստի մեր բանականութիւնը մեզ ասում է, որ կալ մի սկզբնապատճառ, որից առաջ են գալիս բոլոր հետեանքները՝ ներգործութիւններն այդ պատճառն Աստուած է:

Յարկրո՞ կարող ենք հաստատել տիեզերքի մէջ եղած նպատակալարմար կարգ ու կանոնովն՝ տիեզերքի մէջ եղած ներդաշնակութիւնն ու գեղեցկութիւնը ցոյց են տալիս, որ չկալ կարգադրութիւն առանց կարգադրիչի: Բնութեան մէջ առարկաները ինչացի իմաստուն կերպով կարգադրուած են, այդ կարգադրութիւնը տեսնում ենք նրանց մասնիկի կանոնաւոր փոխադարձ յարաբերութեան մէջ (օրինակ, ծառ), ամենիմաստ կերպով ուղղած այդ բոլորը դէպի մի ընդհանուր նպատակի, այսինքն նրանց գոյութիւնը պահպանելուն: Ամբողջ աշխարհում ամեն բան այնպէս կարգաւորած է և մի ամբողջութիւն է կազմում, որ կարծես թէ մի ահագին գործատուն լինի, որի մէջ ամեն մի անդամն իրար հետ սերտ յարաբերութիւն ունի, որի մէջ ամեն բան փոխադարձ իրար ծառայում են և իբրև միջոց և իբրև նպատակ՝ ուղղուելով մի ընդհանուր նպատակին: Այս նպատակալարմար, իմաստուն կարգադրութիւնը ցոյց է տալիս, որ աշխարհս ստեղծուած է առաջուց նախամտածած իմաստուն լատակագծով և թէ, ապա ուրեմն, աշխարհի արարչագործ պատճառը բնական, ամենիմաստ անձնաւոր էութիւն է: Այս հաստատութիւնը գտնում ենք և սուրբ Գրքում: «Ներկինքը պատմում է Աստծու փառքը և հաստատութիւնը՝ նրա ստեղծածները» (Սաղմ. ԺԸ. 1—7). «Ինչպէս մեծ են քո գործերը, Տէր, ամեն ինչ իմաստութեամբ ստեղծեցիր և երկիրը քո ստեղծուածներով լցուեց» (Սաղմ. 69. 24):

Ներորո՞ ինչպէս երկնային մարմիններն և երկիրն իր կարգն ու կանոնով մի որոշ օրէնքով են ընթանում, այնպէս էլ մեր ներքին աշխարհը՝ սիրտն էլ որոշ օրէնքների է հետեւում, ուրեմն տիեզերքի մէջ և ներսն այս կանոնաւորութիւնը չէ կարող առանց կանոնի, առանց օրէնքի լինել, հետեւապէս կալ մէկը, որ օրէնստու է, Որին ամեն ինչ հնազանդվում է՝ դա Աստուածն է:

Օրէնքը, որ մեր հոգու (սրտի) մէջն է և որ ասվում է բարոյական օրէնքը՝ խիղճը, անպայման հրամայում է բարի գործել, չարից հեռանալ: Նրբ բարին ենք գործում, ներքինն ուրախ է, երբ վատ, չար գործ ենք գործում, եթէ մինչև անգամ այդ մասին ոչ ոք չգիտենալ, այն ժամանակ էլ խիղճը մի կրծող օրդն է դառնում, որ երբէք չէ մեռնում. ուրեմն, մեծ օրէնստուն, որ մեզ համար բարի է կամենում, մեր սրտի մէջ դրել է խիղճը բարի նպատակի համար, այսպէս՝ Աստուած բարի օրէնստու է:

Բայց Աստծու միութեան մէջ կան երեք անձնաւոր. Հայր Աստուած, Բ. Որդի Աստուած և Գ. Հոգին սուրբ: Այս երեք անձը կազմում են մի անձառելի միութիւն, սուրբ երրորդութիւն, մի Աստուածութիւն, որովհետեւ սրանք երեքն էլ մի են և հաւասար բնութեամբ, էութեամբ՝ «Երեքն են, որոնք վկայում են երկնքումն Հայրը, Բանն և Հոգին սուրբ, և սրանք երեքն էլ մի են». ա. թ. Յով. Ե. 7»:

«Մկրտեցէք նրանց Հօր, Որդու և սուրբ Հոգու անունով», Մատթ. ԻԸ. 19:

«Հաւատա՞նում ես՝ որ Հայրն իմ մէջ է և Ես Հօր, Ես և Հայրս մի ենք». Յով. Ժ. 30:

Թէ մի Աստուած ինչպէս երեք անձերի մէջ է, այդ աստուածային խորհուրդ կամ գաղտնիք է, որին

մեր միտքը հասնել չի կարող երբէք: Բայց մենք հաւատում ենք այդ աստուածային խորհրդին, որովհետեւ Սուրբ Գիրքն այսպէս է վկայում: Թէև Աստուածային երեք անձերը միմեանցից զանազանվում են անձնաւորութեամբ, բայց բնութեամբ, կամ զօրութեամբ ամենեւին չեն զանազանվում: Զանազանութիւնն այս է՝ Հայրը չէ ծնվում, կամ ծագում մի ուրիշ անձից, Որդին անժամանակ ծնուած է Հօրից, ինչպէս խօսքը ծնվում է մտքից, լոյսը՝ լոյսից: Սուրբ Հոգին յաւիտենից առաջ բխում է միայն Հօրից, ինչպէս որ ինքն Յիսուս ասաց՝ «Ծնարութեան Հոգին, որ ելնում է Հօրից»։ Յով. ԺԵ. 26:

Արեմտեան եկեղեցին VI (589 թ.) դարի վերջերն սկսեց քարոզել՝ Հոգին սուրբ բխումն ի Հօրէ և ի Որդուց, այս վարդապետութիւնը IX (885 թ.) դարի սկզբներից հաստատապէս ընդունեց կաթոլիկ եկեղեցին: Յիսուսի ասածը «Երբ կը գալ Նա՝ ճշմարտութեան Հոգին, ձեզ կառաջնորդի ամենայն ճշմարտութեամբ... Նա ինձ կը փառաւորի, որովհետեւ յիմ: անտի առնուցու և կը պատմի ձեզ» (Յով. ԺԶ. 13, 14)՝ այսպէս է մեկնում արեմտեան եկեղեցին—յիմէ անտի առնուցու — իմ էութիւնից կը ստանալ, ինձնից բխում է, որ սխալ մեկնութիւն է, այլ նշանակում է, թէ նոր դաստիարակը՝ ճշմարտութեան Հոգին մի նոր բան չի քարոզել՝ որ Քրիստոսի վարդապետութիւնից ջոկ բան լինի, այլ հաւատացեալներին կը բացատրի, կը հասկացնի Քրիստոսի քարոզածները:

Թէպէտ հին կտակարանի մէջ Աստուծոյ միութիւնը պարզապէս վկայուած է, բայց այդ աստուածային միութեան մէջ ամենասուրբ երրորդութեան երեք անձերի գոյութիւնը լուսաբանած չէ, այլ աս-

տուածային գործողութիւնների մասին խօսելիս յոգնականաբար է խօսում. այսպէս՝ «Ստեղծենք մարդ մեր պատկերի նման, եկէք, իջնենք և խառնակենք նրանց լեզուները: «Ես ձեզ հետ եմ, ասում է Տէր ամենակալը, և բանն, որ ձեզ խոստացայ... և իմ Հոգին, որ ձեր մէջն է»։ Անգլիա. Բ. 5, 6:

Հին կտակարանի մէջ պարզապէս լուսաբանած չէ երեք անձերի գոյութիւնը նրա համար, որ խրատասիրտ և դէպի բազմաստուածութիւն ձգտումն ունեցող իսրայէլացիները հեռու միան բազմաստուածութեան զաղափարից:

Սակայն նոր կտակարանի մէջ պարզապէս ասուած է երեք անձերի գոյութիւնը մի Աստուածութեան մէջ, օրինակ, երբ Յիսուս Յորդանան գետում մկրտուեց և դուրս էր գալիս, այն ժամանակ Սուրբ Հոգին աղաւնակերպ իջաւ նրա վրայ, իսկ Հօր ձայնը լսվում էր՝ «Դա իմ սիրելի որդին է, դրան լսեցէք»։ Մատթ. ԺԷ. 5. ուրեմն Որդին մկրտվում է, Հոգին իջնում է աղաւնակերպ, Հայրը վկայում է: Սուրբ երրորդութեան խորհուրդը նոյնպէս յայտնուեց Քրիստոսի պայծառակերպութեան ժամանակ: Քրիստոս իր աշակերտներին պատուիրեց՝ «Մրանից յետոյ գնացէք, աշակերտ դարձրէք բոլոր հեթանոսներին, մկրտեցէք նրանց Հօր, Որդու և սուրբ Հոգու անունով» Մատթ. ԻԸ 19—20:

ԱՌՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՄ
ՍՏՈՐՈԳԵԼԻՆԵՐ

Սուրբ գիրքն ուսուցանում է մեզ Աստծու կատարելութիւնները, որոնք են՝ Արարիչ, Ամենակալ, Ամենակարող, անեղ-ինքնագոյ, Հոգի, Յաւիտենական, Անփոփոխ, Ամենուրեք, Ամենագէտ, Ամենատես, Ամենասուրբ, Ամենաբարի, Ամենիմաստ և այլն:

Այս կատարելութիւններից հանգանակի մէջ յիշուած են Արարիչ և Ամենակալ խօսքերը՝ «Հաւատամք... ՚ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի», որովհետեւ այդ երկու կատարելութիւնների մէջ պարունակվում են և միւս մնացեալներն, օրինակ, խոստովանելով, թէ Աստուած Արարիչ է և Ամենակալ, խոստովանում ենք, որ Նա է Անեղ-ինքնագոյ, որովհետեւ արարածն արարածների պատճառ չէ կարող լինել:

Խոստովանելով, որ Աստուած Անեղ-ինքնագոյ է, խոստովանում ենք, որ նա է Յաւիտենական, որովհետեւ սկիզբն չունեցողը՝ վախճան էլ չէ կարող ունենալ:

Խոստովանելով, որ Աստուած Յաւիտենական է, խոստովանում ենք, որ նա է Անփոփոխ, որովհետեւ թէ բնութեամբ և թէ գոյութեամբ նա երբեք չէ փոփոխվում:

Խոստովանելով, թէ Աստուած անփոփոխ և յաւիտենական է, խոստովանում ենք, որ նա ամենապարզ Հոգի է, որովհետեւ անփոփոխ և յաւիտենական կարող է լինել այն էակը միայն, որ նիւթից չէ բաղ-

կացած: Քրիստոս ասում է՝ «Աստուած Հոգի է և Նրա երկրպագուները հոգւով և ճշմարտութեամբ պէտք է երկրպագութիւն անեն»։ Յով. Գ. 24:

Խոստովանելով թէ Աստուած ամենապարզ Հոգի է, խոստովանում ենք, որ Նա է և Ամենուրեք, որովհետեւ Նա ամենայն տեղ է իր աստուածային զօրութեամբ, և եթէ Աստուած ամենուրեք է, ապա ուրեմն Ամենագէտ է և Ամենատես է:

Աստուած Ամենիմաստ է, որովհետեւ անչափ իմաստութեամբ մարդուն ուղղում է դէպի բարին և ամբողջ տիեզերքը կառավարում է իմաստուն ճարտարապետութեամբ:

Աստուած Ամենաբարի է, որովհետեւ իր բարիքը պարգևում է բոլոր արարածներին իւրաքանչիւրին օգուտ բերելու յարմար միջոցներով, ինչպէս Յովնաննէս առաքեալը գրում է՝ «Բոլոր բարի տուրքերն և ամեն տեսակ կատարեալ պարգևները վերեից՝ լոյսի հօրից են ստացուած»։ Յով. ա. 17:

Աստուած Ամենասուրբ է, որովհետեւ նա հեռու է ամենայն չարիքներից և սիրում է տեսնել մարդկանց մէջ արդարութիւն, սրբութիւն:

Աստուած Արդար է, որովհետեւ Նա մեզ տուել է արդար և բարենպատակ օրէնքներ, որոնց կատարելն ամենայն ճշմարտութեամբ պահանջելով, արդարութեամբ վարձատրում է օրինակատարներին և պատժում օրինազանցներին:

Աստուած Սուրբ Գրքի մէջ անուանվում է՝ Գթած, Ողորմած, Երկայնամիտ, և Բազումողորմ, որովհետեւ Նա՝ իր բարիքները մեղաւորներին տալով, սպասում

է նրանց դարձին և՛ ներելով յանցանքները, մօտեցնում է իրեն:

Թէպէտ Աստուած հոգի է, բայց Սուրբ Գրքում փոխաբերական մտքով Նրան վերագրած են ականջ, ձեռք, աչք, ձայն, ոտք և այլն. ականջ ասելով՝ իմանում ենք Նրա խողովածիւնն, աչք ասելով՝ հասկանում ենք նրա ամենատեսութիւնը, ձեռք ասելով՝ նրա նախախնամութիւնը, ոտք ասելով՝ նրա արագահաս օգնութիւնն և այլն:

Սուրբ երրորդութեան առաջին անձն Հայր Աստուած

Ա Ր Ա Ր Ձ Ա Գ Ո Ր Ծ Ո Ի Թ Ի Ի Ն

«Հաւատամք... 'ի Հայրն ամենա՛լի, Արարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևոյթից».

Այս խօսքերով դաւանում ենք և խոստովանում, թէ ամենասուրբ երրորդութեան անձերից Հայր Աստուած իր ամենակարող Բանով (Որդւով) և սուրբ Հոգւով ոչնչից ստեղծեց բոլոր երկնաւոր և երկրաւոր, երևելի և աներևոյթ արարածներն, ինչպէս որ սուրբ Գիրքը վկայում է, «Սկզբումն Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը. երկիրն էր աներևոյթ և անպատրաստ, խաւարով ծածկուած և Աստծու հոգին շրջում էր ջրերի վրայ» ծննդ. ա. 1: «Սկզբումն էր Բանն, և Բանն էր Աստծու մօտ և Աստուած էր Բանն. Նա էր սկզբումն Աստծու մօտ. ամեն ինչ նրանով եղաւ և առանց նրա ոչինչ չեղաւ» Յով. Ա. 1, և թէ՛ «Տիրոջ ողորմութեամբ երկիրը լցուեց և Տիրոջ խօսքով երկինքը հաստատուեց ու նրա բերանի հոգւով՝ երկնքի բոլոր զօրութիւնները» Սաղ. ԼԲ. 6:

Աներևոյթ արարածները հրեշտակներն են, և մարդկանց հոգիները: Հրեշտակներն անմարմին, անմահ հոգիներ են և ստեղծուած են Արարչին սպասաւորելու համար:

Հրեշտակները բաժանվում են բարի և չար: Բարի անուանվում են այն հրեշտակները, որոնք անփոփոխ ֆնացին Աստծուն հնազանդ. սրանք բազմաթիւ են և բաժանվում են ինն դասերի՝ Սերովբէք, Քերովբէք, Աթոռք, Իշխանութիւնք, Պետութիւնք, Զօրութիւնք, Տէրութիւնք, հրեշտակք և հրեշտակապետք:

Չար հրեշտակներ—սատանաներ, դեւեր և չար ոգիներ՝ նրանք են, որոնք իրենց ամբարտաւանութեամբ Աստծու դէմ մեղանշելով՝ կորցրին իրանց երջանկութիւնն և դատապարտուեցան յաւիտենական պատժի:

Նրեւելիքն՝ աշխարհն է իր զանազան տեսակ նիւթական արարածներով, որ Աստուած ոչնչից ստեղծեց վեց օրում:

Առաջի օրն ստեղծեց լոյսը:

Երկրորդ օրը՝ հաստատութիւնը (օգը):

Երրորդ օրը՝ ջուրը ցամաքից բաժանեց և հրամայեց, որ ցամաքի վրայ աճեն բոյսեր:

Չորրորդ օրն՝ երկնային մարմիններն—արեգակը, լուսինն և աստղերը:

Հինգերորդ օրն՝ օգում թռչուններն և ջրում ձկները:

Վեցերորդ օրը՝ բոլոր չորքոտանի կենդանիներն և ապա մարդը:

Նիւթական աշխարհի բոլոր արարածներից գերագոյնն է մարդը, որովհետեւ Աստուած մարդուն տուել է հոգի և բանականութիւն մտածելու, խորհելու, դատելու և զարգարել է նրան իր պատկերով, որ հոգու անմահութիւնն է, սրբութիւնն է:

Թէև մարդս՝ չպահելով Աստծու պատուիրանն՝ աղօտացրեց այդ աստուածային պատկերը, սակայն Աստուած իր Միածին Որդու միջոցով նորոգեց նոյնն և հարթեց մարդու առաջ փրկութեան ճանապարհը, որ տանում է դէպի յաւիտենական կեանքը, որի համար և ստեղծել էր: Պօղոս առաքեալն ասում է՝ «Բայց Աստուած, որ իր ողորմութեամբ մեծ է, այն սիրոյ համար, որով մեզ սիրեց, մինչդեռ մենք մեղքի մէջ մեռած էինք, Յիսուս Քրիստոսով մեզ կենդանացրեց»:

«Ինչպէս որ ամենքն էլ Ազամով մեռնում են, այնպէս էլ Քրիստոսով ամենքն էլ կենդանանում են»:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ

Աստուած՝ աշխարհը ոչնչից վեց օրում ստեղծելով ու տեսնելով որ ամեն ինչ բարի է, եօթներորդ օրը հանգստացաւ, այսինքն այլևս բան չստեղծեց, սակայն իր ստեղծածն անխնամ չթողեց. նա սկսեց իր ստեղծածը պահպանել, խնամել՝ այսինքն Աստուած թէ աշխարհի և թէ նրա մէջ եղած իրերի մէջ մի ոյժ, զօրութիւն է դրել, որոնցով նրանք պահպանվում են և խնամվում: Օրինակ, կենդանիներին բնազդում է աուել, որի միջոցով նրանք կերակուր են գտնում: Մարդս օժտուած է զանազան ձիրքերով, որոնց միջոցով նա կարողանում է իր համար կերակուր և հագնելիք ձեռք բերել: Թռչուններն էլ և վայրի շուշանն էլ օգտվում են Աստծու տուած զօրութիւններով:

ինչպէս Քրիստոս ասում է «Իմ հայրը մինչև այժմ գործում է, և ես գործում եմ. Յով. Ե. 17: Նա տալիս է ամենքին կեանք, շունչ և ամեն ինչ. որովհետեւ Նրանով ապրում ենք, շարժվում և գոյութիւն ունինք»». Գործ. Ժէ. 25, 28:

Այսպէս՝ Աստուած իր նախախնամութեամբ՝ որէ նրա ամենակարող, ամենիմաստ և բարի ներգործող գործութիւն, կառավարում է և պահպանում բոլոր արարածներին, հոգալով նրանց ամեն պիտոյքն, և հաւասարապէս խնամում երկրիս վրայ թէ արդարեւորին և թէ մեղաւորներին:

Այսպիսի նախախնամութեամբ Աստուած կառավարում է և պահպանում իր եկեղեցին և պիտի պահպանի յաւիտեանս: Թէ հին և թէ նոր եկեղեցին՝ այնքան հալածանքներին և դժուարութիւններին տանելով, մինչև այսօր պահպանել է իր գոյութիւնը, այդ անհերքելի ապացոյց է Աստծու յատուկ նախախնամութեան: Քրիստոս ասում է՝ «Ես ձեզ հետ եմ ամեն օր՝ մինչև աշխարհի վերջը» Մատթ. ԻԸ. 20:

Սուրբ Երրորդութեան երկրորդ անձն

ԱՍՏԾՈՒ ՈՐԴԻՆ

«Հաւատամք և 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս, !Որդին Աստուծոյ, ծնեալն !Աստուծոյ

Հօրէ Միածին՝ ալսինքն լէութենէ Հօր. Աստուած !Աստուծոյ, յոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ !Աստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած. նոյն ինքն 'ի բնութենէ հօր, որով ամենայն ինչ եղև !երկինս և 'ի վերայ երկրի, երևելիք և աներևույթ»:

Այս դաւանութեամբ խոստովանում ենք, որ մեր միակ Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոս ամենասուրբ երրորդութեան երկրորդ անձն՝ Աստծու Որդին է, Հօր էութիւնից յաւիտենից առաջ ծնուած, Նա Միածին է, այսինքն՝ չկայ ուրիշ մէկը նրա նման. Նա ինչպէս լոյսը լոյսից, ճշմարիտ Աստուած ճշմարիտ Աստծուց յաւիտենից առաջ ծնուած և ոչ արարած — ստեղծուած է, այսինքն՝ Աստծու Որդին Հօր և Սուրբ Հոգու հետ միեւնոյն աստուածային յատկութիւններն և էութիւնն ունի, ապա ուրեմն «ամեն ինչ նրանով է եղել» Յով. Ա. 3:

ԱՍՏՈՒԱԾՈՐԴՈՒ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆԸ

«Որ լաղազս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ !երկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ Կուսէն հոգւովն սրբով. որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և զամենայն որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք»:

Սոստովանում ենք, թէ Աստծու Որդին Հօր և Սուրբ հոգու կամքով մարդացաւ, ճշմարտապէս մարդկային մարմինն և բնութիւնն առաւ Սուրբ Կոյս Մարիամից և միաւորեց իր աստուածային անձի և բնութեան հետ, այսինքն Նա որ ճշմարիտ Աստուած էր՝ Հօր Աստծուց յաւիտենից առաջ ծնուած, նոյն ինքն ճշմարիտ մարդ դարձաւ և ծնուեց Սուրբ Կոյսից Սուրբ հոգով՝ ճշմարտապէս և ոչ կարծիքով։ Եւ որովհետեւ Սուրբ Կոյս Մարիամը Յուդայի ցեղիցն և Դաւթի ազգիցն էր, այս պատճառով էլ Աստուած՝ և Աստծու որդին, որ եղաւ մարդ, անուանուեց Որդի Աստծու և որդի մարդու։ «Ահա կոյսը կը յղանայ և որդի կը ծնի ու նրա անունը կը դնեն Էմմանուէլ, որ նշանակում է Աստուած մեզ հետ» Եսայի։

«Սուրբ հոգին կը դայ քո վրայ, և Աստծու զօրութիւնը հովանի կը լինի քո վրայ»։ Դուկ. Ա. 55։

Սոստովանում ենք, թէ Որդին Աստուած, աւետարեւր հրեշտակի խօսքի համաձայն՝ անուանուեց Յիսուս, որ է Փրկիչ, մարդկային ազգը մեղքից և մահուան դատապարտութիւնից փրկելու համար՝ «Որդի կունենայ և նրան կանուանես Յիսուս, որովհետեւ նա իր ժողովուրդը մեղքերից կը փրկի»։ Մատթ. Ա. 21։

Յիսուս անուանվում է և Բրիստոս՝ Մեսսիա, որ նշանակում է Օծեալ. նախ՝ որովհետեւ տեսնում էին նրա վրայ այն բոլոր գործերն և կատարելութիւններն, որոնք գուշակել էին մարգարէները Մեսսիայի մասին, որին սպասում էին անհամբերութեամբ։

Երկրորդ՝ նրա համար, որ Յիսուս կատարեց իր կեանքի մէջ մարգարէի, քահանայի և թագաւորի պաշ-

տօնը, որոնք երբայական եկեղեցու օրէնքի համաձայն օծվում էին իւղով. իսկ Յիսուս յաւիտենից օծեալ էր սուրբ Հոգուց։

Յիսուս մարգարէի պաշտօնն աւելի գերազանց կերպով կատարեց, քան թէ միւս մարգարէները, որովհետեւ նա ուսուցանում էր մարդկանց Աստծու կամքը, ցոյց էր տալիս մարդկանց բարոյականութեան փրկարար ճանապարհը. նա քարոզում էր, որ Աստուած ամեն միւսին իր գործի համեմատ կը հատուցանէ. նա աստուածային հրաշքներով ապացուցանում էր, որ ինքն Աստծու առաքեալ է՝ «Եթէ իմ հօր գործերը չեմ գործում, միք հաւատալ ինձ», ասում էր Քրիստոս։

Յիսուս կատարեց քահանայի պաշտօնն աւելի գերազանց կերպով, քան Ահարոնեան քահանաները, որովհետեւ նա աստուածաբար թողնում էր մարդկանց իրենց մեղքերը։ Նա իր կեանքը պատարագեց մարդկանց փրկութեան համար սուրբ խաչի սեղանի վրայ. նա եղաւ նոր ուխտի միջնորդ Աստծու և մարդկանց մէջ. նա երկնքում միշտ բարեխօս է հօր մօտ մեր մեղքերի թողութեան համար։

Յիսուս ոչ թէ երկրաւոր թագաւոր էր, ինչպէս հրէաները կարծում էին, այլ հոգւոր և երկնաւոր թագաւոր է բոլոր տիեզերքի, մանաւանդ իր եկեղեցու, որի հետ յաւիտեան լինել խոստացաւ, և խնամում է ու պահպանում նրան։ Քրիստոս ասում է՝ «Իմ արքայութիւնն այս աշխարհից չէ»։ Յով, ԺԸ. 36։

«Տէր Աստուած նրան կը տայ իր հօր՝ Դաւթի աթոռն և Յակովբի տան վրայ յաւիտեան կը թագա-

ւորի ու Նրա թագաւորութիւնն վերջ չի ունենալ»
Ղուկ. Ա. 31—34:

«Ես ձեզ հետ եմ ամեն օր՝ մինչև աշխարհի վերջը»։ Մատթ. ԻԸ. 20:

Մեր եկեղեցին դաւանում է, որ մարդացած Աստծու որդու՝ Քրիստոսի մէջ մի անձն էր՝ աստուածային և ոչ մարդկային. նա սուրբ Մարիամից առնելով մարդկային բնութիւնն և միացնելով իր աստուածային անձի և բնութեան հետ՝ եղաւ կատարեալ մարդ հոգով, մտքով և մարմնով, կատարեալ Աստուածութեամբ. մի անձն, մի դէմ և միաւորեալ մի բնութիւն երկու բնութիւնից՝ անշփոթ և անբաժան միաւորած միմեանց հետ մէկ անձի—Քրիստոսի մէջ:

ԱՍՏՈՒԱԾՈՐԴՈՒ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՒՆԸ

«Չարչարեալ, խաչեալ, թաղեալ»։

Այս դաւանութեամբ նախ՝ խոստովանում ենք, թէ Յիսուս իր ճշմարիտ վարդապետութիւնը մարդկանց ուսուցանելուց յետոյ, ամենասուրբ երրորդութեան նախասահման տնօրէնութեան համաձայն, կամեցաւ իր անձը զոհել մարդկային ազգի փրկութեան համար. այս պատճառով իր կամքով յանձն առաւ չարչարուել իր վարդապետութեան հակառակորդներից և, ամեն տեսակ անարգական չարչարանքներ կրելուց յետոյ՝ բարձրանալ խաչի վրայ մարդկանց մեղքի և մահի դատապարտութիւնից ազատելու համար:

Երկրորդ՝ խոստովանում ենք, թէ Յիսուս խաչի

վրայ ճշմարտապէս մեռաւ և թաղուեց գերեզմանում: Նա իր անմեղ մահով ջնջեց մեր հակառակութեան կամ թշնամութեան ձեռագիրը. Պօղոս առաքեալն ասում է՝ «Իր վարդապետութեամբ ջնջեց մեր հակառակութեան ձեռագիրն և մեզ որ հակառակ էր՝ վերացրեց նրան միջից ու խաչափայտի վրայ բեկեց»։ Պօղոս Բ. 14: Նա մեզ հաշտեցրեց Հայր Աստծու հետ և ազատեց յաւիտենական դատապարտութիւնից—Ադամի մեղքից:

«Երրորդ աւուր յարուցեալ»։

Այս խօսքերով խոստովանում ենք, թէ Յիսուս իր և ուրիշ շատ մարդարէնների գոհակութիւնների համաձայն՝ իր թաղման երրորդ օրը յարութիւն առաւ: Նա իր յարութեամբ հաստատեց մեր ապագայ յարութիւնն և տուեց յաւիտենական կեանքի յոյսը՝ «Բոլոր ննջեցեալների պտուղն և անդրանիկն եղաւ ու հաստատ յոյս տուեց բոլոր մարդկանց նորից կենդանանալու համար» — Ժամագիրք:

«Ելեալ ի լերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ հօր»։

Այս դաւանութեամբ խոստովանում ենք, թէ Յիսուս, իր յարութիւնից յետոյ՝ յաճախ երևում էր իր աշակերտներին և խօսում էր նրանց հետ Աստծու արքայութեան մասին. նա նրանց տալիս էր պա-

տուէրներ և խոստացաւ ուղարկել Սուրբ հոգին նը-
րանց զօրացնելու և մխիթարելու համար: Եւ ապա
Յիսուս, քառասներորդ օրը Ձիթենեաց սարի վրայ
իր աշակերտներին օրհնելով՝ համբարձուեց երկինքն
և Հօր աջ կողմը նստաւ, այսինքն Յիսուս՝ հայրակամ
բոլոր տնօրէնութիւնները կատարելով, նոյն մարմ-
նով երկինքը վերացաւ և աստուածային փառքը մը-
տաւ, որ յաւիտենից հօրից ունէր՝ «Ձէ որ Քրիստոս
նոյն չարչարանքները պէտք է կրէր, որ մտնէր իր
փառքի մէջ» Ղուկ. ԻԴ. 26:

ԱՍՏՈՒԱԾՈՐԴՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԳԱՆՈՒՍՏԸ

«Գալոց է նովին մարմնով և փառօք հօր ի
դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թա-
գաւորութեան ոչ գոյ վախճան».

Այս խօսքերով դաւանում ենք, թէ Յիսուս նոյն
մարդկային մարմնով և Հօր փառքով կրկին գալու է
աշխարհ կենդանիներին և մեռածներին արդարապէս
դատելու՝ մեղաւորներին յաւիտենական պատիժ, ար-
դարներին յաւիտենական երջանկութիւն տալու և ա-
մենքի վրայ յաւիտենական թագաւորելու: «Եւ երբ
մարդու Որդին կը գայ իր փառքով և հրեշտակների
հետ միասին, այն ժամանակ կը նստի իր փառքի ա-
թոռի վրայ ու նրա առաջ կը ժողովուին բոլոր ազ-
գերն և այլն»։ Մատթ. ԻԵ. 31, 32:

ԱՍՏՈՒԱԾՈՐԴՈՒ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՄՈՂՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Աստուածորդու մարդեղութեան դէմ եղած մոլորու-
թութիւններից առաջինն է հրէից ազգի մոլորութիւնը, որ Յի-
սուսին ակնկալեալ Մեսսիան չհամարելով՝ դեռ ևս սպասում
են նոր Մեսսիայի գալստեան. այն ինչ ակնկալեալ Մեսսիայի
վերաբերութեամբ մարգարէների բոլոր գուշակութիւնները
բառ առ բառ, կէտ առ կէտ ճշտութեամբ կատարուել են Յի-
սուս Քրիստոսով, որովհետեւ նախ՝ Մեսսիան պէտք է զար Զօ-
րաբարէլի շինած տաճարը և, Անդեայ ու Մաղաքիա մարգա-
րէների գուշակածին համաձայն՝ այնտեղ պիտի քարոզէր ողոյ
ի ազազութիւն. այն ինչ Զօրաբարէլի տաճարն ահա 19 դար
է, որ կործանուել է և նրա մէջ եղած զոհերը, պատարագնե-
րը, սրբութիւնն ու սեղանները, որոնք ճշմարիտ Մեսսիայով
կատարուելիք քառութեան և փրկագործութեան ստուերական
նմանութիւններն էին՝ վերացած են:

Նրկորդ՝ Դանիէլ մարգարէի գուշակած 490 տարի ժա-
մանկամիջոցը, տաճարի նորոգութիւնից հաշուելով՝ լրա-
նալուն պէս ծնաւ Մեսսիան:

Եւ երրորդ՝ Մեսսիան պիտի զար Յուդայի ցեղից և Յու-
դայի քաղաքական իշխանութիւնը դեռ չվերջացած, այն ինչ
1910 տարի է անցել, որ Յուդայի քաղաքական իշխանութիւ-
նը վերջացել է Հերովդէսով. և հրէից դեռ ևս ակնկալեալ
Մեսսիայի Յուդայի շարաւիղից լինելն այսուհետեւ հաստատել
կամ ապացուցանել անկարելի է, որովհետեւ տաճարի հետ աչ-
րուեցան և անհետացան բոլոր արձանագրական մատեանները,
որոնցով կարելի կը լինէր հաստատել և վաւերացնել նոր
ծնուելի Մեսսիայի Յուդայի ցեղից լինելը:

բ. Նրկորդ հերետիկոսն Աստուածորդու մարդեղութեան
դէմ եղաւ Աղէքսանդրացի Արիոս լոյն երէցն, որ Յիսուսին
Աստուած և Աստծու Որդի չէր դաւանում և ոչ հաւատար և հա-

մագոականից Հօր և Սուրբ Հոգուն, այլ օտար ոմն և արարած՝
բոլոր արարածներից բարձր կատարելութիւններով, բայց ոչ
Աստուած և արարիչ: Արիօսը հիմնովում էր Յիսուսի հետեւալ
խօսքի վրայ՝ «Իմ Հայրն ինձնից մեծ է», այն ինչ խօսքը վե-
րարեցում է Յիսուսի մարդկային խոնարհ վիճակին և բնու-
թեանն:

Այս մոլորութիւնը դատապարտեց Նիկիայի տիեզերական
սուրբ ժողովը 325 թ. Մայիսի 20-ին, որին Հայաստանեայց
եկեղեցու կողմից ներկայ էր սուրբ Արիստակէս հայրապետը
սուրբ Լուսաւորչի հաւանութեամբ: Ժողովը սահմանեց դաւա-
նել Յիսուսին ճշմարիտ Աստուած և Աստծու Որդի համագոյա-
կից և համաբուն Հօր և սուրբ Հոգուն: Այս ժողովում խմբա-
գրուեց հաւատի հանգանակը:

զ. Երրորդ հերետիկոսն եղաւ Կոնստանդինոպոլսի Յու-
նաց Նեստոր պատրիարքը, որ ուրանում էր Յիսուս Քրիստո-
սի իսկապէս Աստծու որդի և մարդու որդի լինելը, և չէր խոս-
տովանում թէ Յիսուս է ճշմարիտ Աստուած և Աստծու Որդի,
Յիսուսի մարդկային մարմինը Նրա աստուածութեան բնակա-
րան էր քարոզում, իսկ Սուրբ Կոյս Մարիամին դաւանում էր
Մարդսին և ոչ Աստուածսին:

Այս մոլորութիւնը դատապարտեց Եփեսոսի տիեզերական
սուրբ ժողովը 431 թ. յունիսի 22-ին, որտեղ ժողովուած էին
200 հայրապետ:

Ժողովը նշովեց Նեստորին ու նրա աղանդն և խոստո-
վանեց Յիսուս Քրիստոս մի Աստծու Որդի, իսկ Սուրբ Կոյս
Մարիամին՝ Աստուածածին:

Սուրբ Երրորդութեան երրորդ անձն Սուրբ հոգին

«Հաւատամք և 'ի սուրբ Հոգին, յանեղն
և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի
մարգարէս և յաւետարանս. որ էջն 'ի Յոր-
դանան, քարոզեաց զԱռաքեալն և բնակե-
ցաւ 'ի սուրբսն»:

Այս դաւանութեամբ մենք խոստովանում ենք,
նախ՝ թէ սուրբ Հոգին ամենասուրբ Երրորդութեան
երեք անձերից մինն է անժամանակնապէս Հօրից
բղխած կամ ելած՝ «Երեքն են, որոնք վկայում են
երկնքում Հայրը, Բանն և սուրբ Հոգին, և սրանք ե-
րեքն էլ մի են»: ա. Յովհ. 6, 7: «Բայց երբ կը գայ
Միխիթարիչը՝ որ ես ձեզ կուղարկեմ Հօրիցս, ճշմար-
տութեան հոգին, որ Հօրից է ելնում, նա կը վկայի
իմ մասին»: Յով. ԺԵ. 26:

Երկրորդ՝ Սուրբ Հոգուն Անեղ և Կատարեալ սո-
րոգելիները տալով, խոստովանում ենք, թէ Սուրբ Հո-
գին Հօր և Որդու նման կատարեալ Աստուած է:

Երրորդ՝ խոստովանում ենք, թէ սուրբ Հոգին
ունի այն ամեն կատարելութիւններն, ինչ որ ունին
Հայրն և Որդին. նա արարչակից, գործակից է Հօր և
Որդու. նա ամենագէտ է և այն... Սուրբ Գիրքն ա-
սում է՝ Աստծու Հոգին շրջում էր ջրերի վրայ»
Ծննդ. ա. 2:

Չորրորդ՝ խոստովանում ենք, թէ սուրբ Հոգին ներշնչեց մարգարէներին և առաքեալներին բերանացի կամ գրաւոր աստուածային յայտնութիւններն և սուրբ Աւետարանը մարդկանց ուսուցանելու համար:

Հինգերորդ՝ խոստովանում ենք, թէ մարգարէներն և առաքեալները՝ Սուրբ Հոգու ներշնչմամբ ու շնորհքով զօրացած՝ կարողացան հրաշագործել և գանազան լեզուներով խօսել, որով ապացուցեցին, թէ իրանց առաքելութիւնն Աստծուց է և ուսումնս երկնային՝ Պօղոս առաքեալն ասում է՝ «Երբէք մարդկանց կամեցածի պէս ոչ մի մարգարէութիւն չարուեց, այլ սուրբ Հոգուց ներշնչուած մարդիկ խօսեցին Աստծու կողմից»։ Պետր. 11. Ա. 21:

Վեցերորդ՝ խոստովանում ենք, թէ Սուրբ Հոգին աղանու նման իջնելով Յորդանանում մկրտուող Յիսուսի վրայ, վկայեց Նրա Աստուածորդի լինելը. «Եւ անա երկինքը բացուեց և տեսաւ, որ Աստծու հոգին աղանու նման իջնում էր ու գալիս էր Նրա վրայ և երկնքից ձայն լսուեց, որ ասում էր՝ գա իմ սիրելի որդին է, որին ես հաւանեցի»։ Մատ. 9. 17:

ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Սուրբ հոգու Աստուածութեան դէմ մոլորութիւն չառնեց Կոստանդինապօլսի Յունաց պատրիարքը՝ հոգեմարտն Մակեդոն, որ սուրբ Հոգու Աստուածութիւնն և նրա կատարեալ Աստուածութիւնն ուրանում էր, ինչպէս որ Արիոս ու-

րացաւ Որդու Աստուածութիւնն և մշտնջենաւորութիւնն Հօր հետ և քարոզում էր թէ՝ Սուրբ Հոգին նրանց էութիւնից օտար է և լոկ պաշտօնեալ նրանց:

Սրա մոլորութիւնը դատապարտեց Կոստանդինապօլսի տիեզերական սուրբ ժողովն՝ 150 հայրապետներից բաղկացած, որ 381 թ. Մալիսին Մեծն Թէոդոս Կայսեր հրամանով կալացաւ: Այս ժողովին մեր եկեղեցու կողմից ներկայ էր Մեծն Ներսէս հայրապետը: Ժողովը սահմանեց դաւանել սուրբ Հոգին համադոյակից Հօր և Որդուն ու հաւասար նրանց երկըրպագելի:

ՇՆՈՐՀԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Շնորհք անուանվում են այն ամեն ներքին և արտաքին բարիքները, որ պարգևել է և պարգևում է Աստուած հաւատացեալներին:

Ներքին շնորհքն երկու կարգի է բաժանվում ա) գերբնական և բ) սովորական:

Գերբնական շնորհքներն անուանվում են մարգարէութիւններ և հրաշագործութիւններ, որ Աստուած հին ուխտի մէջ պարգևում էր մարգարէ անունով ընտրուած սուրբ մարդկանց, որոնք պէտք է ներկայում ապագայի մէջ լինելիքը գուշակէին և խօսքով ու հրաշագործութեամբ ժողովրդին դէպի ճշմարիտ Աստուածապաշտութիւնը հրաւիրէին: Իսկ նոր ուխտի մէջ նոյն շնորհքներն Աստուած պարգևեց առաքեալներին և նրանց հետևողներին, որպէս զի կարողանան՝ խաւարի իշխանութիւնն յաղթելով՝ քրիս-

տոնէական ճշմարտութեան լոյսն ընդհանուր մարդկութեան մէջ տարածել:

Շնորհքը բաշխում է ամենասուրբ երրորդութիւնըն, որ մատակարարւում է սուրբ հոգու միջոցով:

Սովորական շնորհները սուրբ Հոգին բաշխում է՝ նախ՝ նրանց, որոնք արժանապէս ընդունում են եկեղեցու սուրբ խորհուրդներն. երկրորդ՝ նրանց, որոնք հեղութեամբ և աղօթքով զիմում են նրան և երրորդ՝ նրանց, որոնք ընդունած շնորհներն արդիւնաւորում են, ինչպէս որ գրուած է Սուրբ գրքումն՝

«Քաղցածներին լիացրեց բարութեամբ և մեծատներին թողեց դատարկ»։ Դուկ. Ա. 53:

«Ով ունի կը արուի նրան ու կաւելանայ, և ով չունի՝ ունեցածն էլ կը խլուի նրանից»։ Մատթ. ՄԳ. 12:

Սովորական շնորհները, որ սուրբ Հոգին մարդկանց բաշխում է, սրանք են՝ «Հաւատ, Յոյս, Սէր, Համբերութիւն, Զօրութիւն և Աստուածաշնորհական և ունիւն, առանց որոնց չենք կարող կատարել Յիսուսի պատուիրաններն և փրկութեան հասնել, որովհետեւ մարդս միշտ զէպի չարն է հակուած:

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

«Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի»

Եկեղեցի խօսքը՝ Յունարէն էքլիսիա, նշանաւորւմ է Քրիստոսի հաւատացողների ժողով, որոնք մի հաւատով, մի յուսով և մի սիրով հաւատում են Աստուածային ճշմարտութիւններին, որոնցով և միացած են միմեանց հետ՝ հոգևոր և բարոյական միութեամբ:

Եկեղեցին իր սկիզբն ունի նախամարդկանց ժամանակներից, որոնք առաջին անգամ պաշտեցին Աստծուն և հաստատուն յոյս ունեցան խոստացած Մեսսիայի փրկութեանը:

Եկեղեցու նպատակը միշտ եղել է մի և անփոփոխ, սակայն զանազան ժամանակներում զանազան տեսակ տնտեսութեան կամ կառավարութեան ձև ընտանալով, ստացել է և զանազան անուններ, օրինակ՝ նախամարդկանց ժամանակից մինչև Նոյ նահապետն անուանւում է նախնի եկեղեցի, Նոյից մինչև Աբրահամ և Յակովբ՝ նահապետական. Յակովբի Իսրայէլ անուանուելուց յետոյ մինչև Մովսէս մարգարէն՝ իսրայէլեան:

Նախնի, նահապետական և իսրայէլեան եկեղեցիները Մեսսիայի փրկութեան ակնկալութիւնը պահում էին բերանացի աւանդութեամբ, բայց երբ Մովսէս տուեց իսրայէլեան եկեղեցուն գրաւոր ծէսեր, արարողութիւններ և դատաստանական օրէնքներ, որոնք Յիսուսով կատարուելիք փրկագործութեան

ստուերական օրինակներն էին, այն ժամանակից Մեսսիայի գալստեան ակնկալութիւնը պահուեց զրաւոր և եկեղեցին անուանուեց Մովսիսական կամ ընդօրինական մինչև Յիսուսի ծնունդը, որ հաստատեց մարդկային հոգիների փրկագործութիւնը, քրիստոնէական եկեղեցու հիմքը դնելով:

Քրիստոնէական եկեղեցին բաժանվում է երկուսի՝ նախ՝ անդրանկաց կամ յաղթանակող եկեղեցի, որ է սուրբ հրեշտակների և հանգուցեալ սրբերի ժողովն երկնքի կայանում, ինչպէս գրում է Պօղոս առաքեալն եբրայեցիներին՝ «Մօտեցել էք... երկնքում գրուած անդրանիկների եկեղեցուն և ամենքի դատաւոր Աստծուն և մեռած արդարների հոգիներին»։ ԺԲ. 23:

Երկրորդ՝ զինուորեալ եկեղեցի, որ են կենդանի հաւատացեալները. զինուորեալ է ասվում նրա համար, որովհետև հաւատացեալները զինուած են սուրբ հոգու զէնքով աշխարհի փորձութիւններին դիմադրելու և չարի դէմ պատերազմելու համար, ինչպէս որ գրում է Պօղոս առաքեալն եփեսացիներին՝ «Սրանից յետոյ զօրացէք Տիրոջով... Աստծու զէնքով զինուեցէք, որ կարողանաք սատանայի հնարներին դէմ կենալ... սրա համար էլ վերցրէք Աստծու զէնքերը, որ կարողանաք հակառակ կենալ չարին չարութեան օրը»։ Զ. 10—14:

Զինուորեալ եկեղեցին բաժանվում է՝ ա) ուսուցանող, որը են առաքեալներ, աւետարանիչներ, քահանաներ և վարդապետներ ու բ) ուսանող, որ է հաւատացեալ ժողովուրդը:

Եկեղեցու պաշտօնէութիւնը սահմանեց ինքն Յիսուս, առաքելութեան իրաւունքն տալով առաքեալներին և սրանք էլ իրանց յաջորդներին հետեւեալ խօսքերով՝ «Տուեց ինձ ամեն տեսակ իշխանութիւն երկնքում և երկրիս վրայ, ինչպէս որ հայրս ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում» Մատթ. ԻԷ. 19:

Յիսուս եկեղեցու պաշտօնեաներին տուեց ուսուցանելու և մկրտելու իրաւունքն ասելով՝ «Սրանից յետոյ գնացէք՝ աշակերտեցէք բոլոր հեթանոսներին, մկրտեցէք նրանց Հօր, Որդու և սուրբ Հոգու անունով, սովորեցրէք նրանց պահել այն բոլորն, ինչ որ ձեզ պատուիրեցի. և ահա ձեզ հետ եմ ամեն օր՝ մինչև աշխարհի վերջը» Մատթ. ԻԸ. 12—20: Նաև իրաւունք տուեց մարդկանց մեղքերը թողնելու հետեւեալ խօսքերով՝ «Ստացէք Սուրբ Հոգին, որոնց մեղքերը ներէք, ներուած լինի, և որոնցը կապէք, կապուած լինի»։ Յով. Ի. 22, 23:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒ ՅԱՏԿՈՒ ԹԻՒՆՆԵՐԸ

Քրիստոնէական եկեղեցին ունի չորս յատկութիւն՝ որոնք են մի, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական:

Եկեղեցին «մի» է ասվում նրա համար, որ բոլոր հաւատացեալները թէև ազգով, լեզուով, ծէսերով, արարողութիւններով և վարչական ձևերով բաժանուած են միմեանցից, սակայն իբրև մի մարմին

միացած են իրանց միակ գլխի—Քրիստոսի հետ մի հաւատով, մի յուսով և մի սիրով: Պօղոս առաքեալն ասում է՝ «Շատերս մի մարմին ենք Քրիստոսով»։ Հռով. ԲԺ. 5:

Եկեղեցին «սուրբ» է ասվում նախ՝ որովհետեւ ինչպէս որ իր գլուխն արդար և անարատ է, այնպէս էլ սուրբ են նրա անդամները, որ Քրիստոսի բարոյական մարմինն են. երկրորդ՝ որովհետեւ սրբուած են ամեն տեսակ մեղքերից մկրտութեան շնորհքով. երրորդ՝ որովհետեւ սրբութիւն է քարոզում և պատ է անմաքուր, մոլար և սուտ վարդապետութիւններից. չորրորդ՝ որովհետեւ նրա մէջ կատարվում են քրիստոսագիր, սրբաբար և շնորհաբաշխ խորհուրդներ: Պօղոս առաքեալն ասում է՝ «Մեզ փրկեց և կանչեց դէպի սուրբ կոչումն» Բ. Տիմ. Ա. 9:

Եկեղեցին «ընդհանրական» կամ յոնարէն «կաթողիկէ» է ասվում նախ՝ որովհետեւ քրիստոնէութիւնը բոլոր աշխարհիս մէջ տաքածուած է և պիտի տարածուի մինչև աշխարհիս վերջը. երկրորդ՝ նա, դէպի իրեն գիմող ազգերին մկրտում, սրբում, միացնում իր հետ և անխաիր սիրով ընդունում է իր ծոցի մէջ: «Որ միանգամ Քրիստոսի անունով մկրտուեցաք, քրիստոնեայ էք, զանազանութիւն չկայ՝ ոչ հրէայի և ոչ էլ հեթանոսի մէջ... որովհետեւ դուք ամենքդ էլ Յիսուս Քրիստոսով մի էք»:

Եկեղեցին «առաքելական» է ասվում, որովհետեւ Քրիստոսի քարոզած հաւատը հաստատուած է առաքեալների գրուածների և աւանդութիւնների վրայ: «Սրանից յետոյ օտար և պանդուխտ չէք, այլ Աստ»

ծու ընտանիներ և քաղաքացիներ՝ հաստատուած լինելով առաքեալների և մարգարէների վրայ, որի անկիւնի գլուխը Յիսուս Քրիստոսն է» Եփես. Բ. 19—20:

ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

«Հաւատամք... 'ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց».

Եկեղեցու խորհուրդներն այն ծէսերն ու արարողութիւններն են, որոնք եկեղեցու կարգաւոր պաշտօնեաների ձեռքով՝ որոշեալ նիւթով և ձևով մատակարարվում են հաւատացեալներին սուրբ հոգու շնորհքն ստանալու համար: Այս սուրբ արարողութիւնները կոչվում են խորհուրդ նրա համար, որ սրբազան գործողութիւնները տեսանելի են, իսկ Աստծու շնորհքն անտեսանելի, աներևոյթ: Խորհուրդներն եօթն են՝ Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Ամուսնութիւն, Կարգ կամ Զեոնադրութիւն և Օծումն կամ Այցելութիւն հիւանդներին:

Մ Կ Ր Տ ՈՒ Թ Ի Ի Ն

Մկրտութիւնն եկեղեցու սրբաբար խորհուրդներից մինն է, որ հաստատեց Յիսուս հաւատացեալնե-

րին սկզբնական մեղքից մաքրելու և հոգևոր կեանք պարգևելու համար՝ «Մկրտեցէք բոլոր հեթանոսներին Հօր, Որդու և սուրբ Հոգու անունով»։ Մատթ. ԻԸ. 20.

Մկրտութեան խորհրդի էական խօսքն է «... ծառայս Աստուծոյ մկրտի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»։

Մկրտութեան խորհուրդը կատարում են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները։ Նիւթն օրհնած ջուրն է, իսկ արտաքին ձէն աչն է, որ երեսային ջրի մէջ երեք անգամ ընկղմելով՝ մի անգամ ասում են՝ «... ծառայս Աստուծոյ մկրտի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»։

Երեք անգամ ընկղմելն օրինակ է Քրիստոսի երեք օրուայ թաղման և յարութեան։

Հայոց եկեղեցին մկրտութիւնը համարում է անկրկնելի. սրա համար էլ հանգանակի մէջ դաւանում ենք՝ «հաւատամք ՚ի մի մկրտութիւն»։

Կայ և նահատակութեամբ, արիւնով, սիրոյ կրակով մկրտութիւնը։

Վաթուիկ եկեղեցու կարգաւոր պաշտօնեան մկրտութեան խորհուրդն կատարում է ոչ թէ մկրտողին երեք անգամ սուրբ երրորդութեան անունով ընկղմելով ջրի մէջ, այլ նրա վրայ երեք անգամ ջուրն սրսկելով։

Գ Ր Ո Շ Մ

Դրոշմն եկեղեցու սրբարար խորհրդներից միսն է, որ հաստատեց սուրբ Հոգին իջնելով Յիսուսի վրայ մկրտութեան ժամանակ և առաքեալներին վրայ

Պենտեկոստէի օրն և նրանց զօրացրեց իրանց դժուարատար պաշտօնի մէջ՝ «Երբ Յիսուս մկրտուեց, և ջրից դուրս էր գալիս, ահա երկինքը բացուեց և տեսաւ որ Աստծու հոգին աղաւնու նման իջնում էր և գալիս էր նրա վրայ»—Մատթ. Գ. 16, 17։

Առաքեալները դրոշմի խորհուրդը կատարում էին ձեռք դնելով մկրտուածների վրայ, որով վերջիններն զգալի նշանով և զօրութեամբ ընդունում էին հոգին սուրբ՝ «եւ երբ լսեցին, մկրտուեցան Յիսուս Քրիստոսի անունով, և երբ Պօղոսը նրանց վրայ ձեռքը դրեց, նրանց վրայ սուրբ հոգին իջաւ» Գործք. ԺԹ. 5, 6։

Դրոշմի էական խօսքն է՝ «Իւղ անոյշ հեղեալ յանուն Յիսուսի Քրիստոսի կնիք երկնաւոր պարեակց»։ Նիւթն օրհնած միւռնն է, իսկ արտաքին ձէն է մկրտուածի ճակատն, աչքերն, ականջները, քիթը, ձեռքերը, կուրծքը, թիկունքն և ոտները միւռնով խաչած և օծելը։

Այս զգալի օծութեան միջոցով մկրտուածն ընդունում է սուրբ Հոգու օծութիւնը—շնորհքն և զօրութիւնն ու նրանցով պատերազմ մղելով աշխարհի և նրա մոլութիւնների դէմ՝ յաղթող է հանդիսանում։

Մեր եկեղեցին այս խորհուրդը կատարում է մկրտելուց անմիջապէս յետոյ, որովհետեւ սուրբ հոգին ևս Յիսուսի վրայ իջաւ մկրտուելուց անմիջապէս յետոյ՝ նոյնպէս և առաքեալները ձեռք էին դնում մկրտուածների վրայ նրանց մկրտուելուց անմիջապէս յետոյ։

Մեր եկեղեցին դրոշմի խորհուրդն անկրկնելի է

համարում նոյն իսկ այն պատճառով, ինչ պատճառով որ մկրտութիւնը, որովհետեւ վերջինն առաջինի շարունակութիւնն է:

Կաթողիկ եկեղեցին դրսւմ տալիս է մկրտածներին 7—12 տարեկան հասակում. այս սովորութիւնը մտաւ ժողովրդի:

Ա Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ապաշխարութիւնն եկեղեցու խորհուրդներից մինն է, որով զղջացող մեղաւոր հաւատացեալն իր մեղքերը քահանայի առաջ Աստծուն խոստովանելով՝ իր հաւատի համաձայն քահանայի միջոցով ստանում է Աստծուց իր ներգործական մեղքերին թողութիւն:

Ապաշխարութեան խորհուրդը հաստատեց ինքն Յիսուս Քրիստոս ասելով՝ «Ես չեկայ արդարներին կանչելու ապաշխարութեանն՝ այլ մեղաւորներին»: Յիսուս Քրիստոս առաքեալներին տուեց մեղքեր թողներու իրաւունքը՝ «Փչեց նրանց և ասում է, ստացէ՛ք սուրբ հոգին, եթէ մարդկանց ներէ՛ք մեղքը՝ ներուած կը լինի». Յով. Ի. 22:

Այս խորհուրդը պէտք է կատարել նախ՝ կատարեալ զղջմամբ, երկրորդ՝ անթերի խոստովանութեամբ և երրորդ՝ հաստատապէս յուսալով, որ Յիսուս Քրիստոսի շարժարանքի արդիւնքով անպատճառ թողութիւն կը ստացուի: Խորհուրդս մատակարարողներն են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները:

Հ Ա Ղ Ո Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հաղորդութիւնն եկեղեցու սրբարար խորհուրդներից մինն է, որ Յիսուս Քրիստոս իր փրկագործ շարժարանքի և մահուան յիշատակի համար սահմանեց Պատեքի տօնի ժամանակ, աւագ հինգշաբթի, այսպէս՝ Յիսուս առնում է իր ձեռքն անխմոր հացն (բաղարջ), օրհնում է և տալիս է իր աշակերտներին ասելով՝ «Առէ՛ք կերէ՛ք այս է մարմին իմ» և ապա առնելով բաժակն օրհնում է և տալիս է իր աշակերտներին ասելով՝ «Արբէ՛ք ՚ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ»: «Այս կատարեցէ՛ք իմ յիշատակի համար»:

Հաւատացեալը հացի և գինու տեսակով ճաշակելով Յիսուս Քրիստոսի մարմինն և արիւնը միանում է Յիսուսի հետ և ընդունում է յաւիտենական կեանքը: Յիսուս ասում է՝ «Ով ուտում է իմ մարմինն և խմում իմ արիւնն, այնպիսին բնակվում է իմ մէջ, և ես՝ նրա մէջ». Յով. Գ. 57: Եւ թէ՛ «Ով ուտում է իմ մարմինն և խմում է իմ արիւնն, այնպիսին յաւիտենական կեանքն ունի և վերջին օրն ես նրան կը կենդանացնեմ». Յով. Զ. 58:

Հաղորդուող հաւատացեալը պէտք է ունենայ նախ՝ սրտով զղջումն, երկրորդ՝ հաստատուն հաւատ, երրորդ՝ ջերմ ցանկութիւն Յիսուսին մօտենալու և չորրորդ՝ հաստատ որոշումն այլեւ չմեղանչելու: Հակառակ դէպքում հաղորդուող հաւատացեալը դատապարտվում է:

Խորհուրդս մատակարարողներն են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները:

Հաղորդութեան էական խօսքն է «Առէք, կերէք»
և «Արբէք 'ի սմանէ» խօսքերը: Նիւթն է անխմոր
հաց (բաղարջ) և անապակ գինի. արտաքին ձևն է
խորհրդի գործողութիւնը, որ կոչվում է պատարագ:
Հաւատացեալը պարտաւոր է տարուայ մէջ մի
քանի անգամ հաղորդուիլ: Մեր եկեղեցին անխտրա-
բար ճաշակում է ամեն հասակի հաւատացեալին, իսկ
կաթոլիկ եկեղեցին 16 տարեկան հասակից և միայն
Մարմնով, իսկ իրանք հոգևորականներն ճաշակվում
են Մարմնով և Արիւնով:

Յունաց եկեղեցին ընդունում է հաղորդութեան նիւթը
խմորով հաց և ջրախառն գինի. կաթոլիկ եկեղեցին՝ բաղարջ
հացն և ջրախառն գինին:

Ա Մ Ո Ի Ս Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ամուսնութիւնն եկեղեցու սրբարար խորհուրդ-
ներից մինն է, որ նախ՝ սահմանեց ինքն Աստուած
զբախտի մէջ օրհնելով նախամարդկանց միաւորու-
թիւնն ասելով՝ «Աձեցէք և բազմացէք և լցրէք եր-
կիրը». Ծննդոց ա. 28, և ապա Յիսուս ամուսնու-
թեան նախկին եղծեալ սրբութիւնը, միաւորութիւնն
և անլուծանելի կապը սրբագործեց և հաստատեց ա-
սելով՝ «Որին Աստուած միացրեց, մարդը թող չբա-
ժանի». Մատթ. ԺԹ. 27: Պօղոս առաքեալն ամուս-
նութեան խորհուրդն անուանում է մեծ: Նա մարդու
և կնոջ միաւորութիւնը նմանեցնում է Քրիստոսի իր
եկեղեցու հետ միաւորութիւնն ասելով՝ «Այս խոր-

հուրդը մեծ է, բայց ձեզ ասում եմ Քրիստոսի և ե-
կեղեցու նկատմամբ» Եփես. Ե. 32:

Սորհուրդս մատակարարողներն են եկեղեցու
կարգաւոր պաշտօնեաները:

Ամուսնութեան էական խօսքն է «Առեալ զձեռն
Եւայի և տուեալ 'ի յաջն Ադամայ և ասէ՝ այս է ոսկը
յոսկերաց իմոց և մարմին 'ի մարմնոյ իմմէ. սա կո-
չեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ»: Արտաքին ձևն
է մարդու և կնոջ իրանց ազատ կամքով միմեանց
ձեռք տալը՝ որով ներքին կերպով, սրտով, կամքով
կազմում են մի բարոյական միութիւն և լինում են
մի անձն:

ԿԱՐԳ ԿԱՄ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կարգ կամ Ձեռնադրութիւնն եկեղեցու սրբարար
խորհուրդներից մինն է, որ սահմանեց ինքն Յիսուս
Քրիստոս Ձիթենեաց սարի վրայ: Նա, իր համբարձ-
ման ժամանակ օրհնելով իր առաքեալներին՝ իրա-
ւունք առեց նրանց ուսուցանելու հեթանոսներին,
մկրտելու և մարդկանց մեղքերին թողութիւն տալու.
«Նրանց տարաւ մինչև Բեթանիա և բարձրացնելով
իր ձեռները օրհնեց նրանց» Դուկ. ԻԴ. 49:

«Եթէ մարդկանց մեղքը կը ներէք, ներուած կը
լինի». Յով. Ի. 22:

«Սրանից յետոյ գնացէք աշակերտ դարձրէք բո-
լոր հեթանոսներին, մկրտեցէք նրանց Հօր, Որդու և
սուրբ Հոգու անունով, սովորեցրէք նրանց պահել

այն բոլորն, ինչ որ պատուիրեցի ձեզ» Մատթ. ԻԸ. 19, 20:

Մեր եկեղեցու օրէնքով այս խորհրդին արժանանում են այն անձերը, որոնց բարի վարքի և ուսման մասին վկայում է նրանց ընտրող եկեղեցին.— ժողովուրդն, և որոնք չունին ոչինչ մարմնական արատ:

Այս ընտրեալները՝ նուիրելով իրանց անձն Աստծու ծառայութեանը, դիմում են եպիսկոպոսին, վերջինս օրհնում է նրանց, օծում է սուրբ միոռոնով և իրաւունք է տալիս Աստծու տանը սրբազորութիւն անելու և ժողովրդի հոգեւոր պիտոյքը մատակարարելու:

Կարգն ունի եօթն աստիճան՝ Դռնապանութիւն, Դպրութիւն, Երգմեցուցչութիւն, Զահակալութիւն, Կիսասարկաւագութիւն, Սարկաւագութիւն և Քահանայութիւն:

Եպիսկոպոսն և կաթողիկոսն ևս ըստ կարգի քահանայ են, սակայն քահանայից զանազանվում են իրանց պաշտօնի և իշխանութեան գերազանցութեամբ:

Կարգի աստիճանը տրվում է եպիսկոպոսից՝ առաջի հինգն աղօթքով, վեցերորդը ձեռնադրութեամբ, իսկ եօթներորդը ձեռնադրութեամբ և օծումով:

ՕԾՈՒՄՆ ԿԱՄ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԳՆԵՐԻՆ

Օծումն կամ այցելութիւն հիւանդներին եկեղեցու սրբարար խորհուրդներից մինն է, որ սահմանեց ինքն Յիսուս այցելութիւն անելով հարիւրապետի հի-

ւանդ ծառային և Պետրոսի գործանչին ու բժշկելով նրանց:

Յիսուս բժշկելու իշխանութիւնը տուեց և իր առաքեալներին՝ «Նրանց իշխանութիւն տուեց պիղծ այսերին հալածելու և բժշկելու ամեն տեսակ ցաւերն և հիւանդութիւնները» Մատթ. Ժ. 1:

«Եղաւ որ Պաղղիայի հայրը՝ Ղերմով և Թանչքով հիւանդացած՝ պառկած էր. Պօղոսը նրան մօտենալով ու աղօթելով՝ ձեռն դրեց նրա վրայ ու բժշկեց»։ Գործք. ԻԸ. 8:

Մեր եկեղեցին այս խորհուրդը կատարում է այսպէս՝ քահանան խաչով և աւետարանով գնում է հիւանդի մօտ, կարդում է նրա վրայ սահմանուած աղօթքներն, աւետարանները, գրքերը, սաղմոսներն և շարականները:

Մեր Մաշտոցում այս խորհուրդն անուանվում է «գիշերային ժամ»:

Հիւանդը Ղերմեռանդութեամբ խոստովանում է իր մեղքերը, հաղորդվում Քրիստոսի սուրբ մարմնին և արեանն ու իր հաւատի համաձայն ստանում է մեղքերին թողութիւն և ցաւերին թեթեւութիւն:

Յակովբոս առաքեալն այսպէս է պատուիրում՝ «Եթէ ձեզնից մէկը հիւանդանայ, թող կանչէ եկեղեցու քահանաներին և նրա վրայ աղօթեն, Տիրոջ անունով օծեն իւղով, և հաւատով աղօթքը հիւանդին կը փրկէ և Տէրը նրան կառողջացնի. եթէ գործած մեղք կունենայ, կը ներուի» Յակ. Ե. 14—16:

Այս խորհուրդն երբեմն առաքեալները՝ հին ուխտից առած՝ կատարում էին հիւանդին իւղով օծելով,

իսկ առաքեալներ յաջորդներն և մեր եկեղեցին՝ առաքելական դարից սկսած՝ կատարում են առանց օծումի: Քրիստոս ինքը միշտ, իսկ իր առաքեալները շատ անգամ, նոյն խորհուրդը կատարում էին առանց օծումի, որովհետև ինչպէս Սարգիս շնորհալին ևս ասում է, «Ոչ թէ իւրը հիւանդին առողջութիւն է տալիս, այլ Տիրոջ անունը»:

ՄԵՌԵԼՆԵՐԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ

«Հաւատամք... 'ի յարութիւն մեռելոց».

Այս դաւանութեամբ խոստովանում ենք, թէ աշխարհի վերջն ամեն ննջեցեալների մարմիններն՝ Աստծու հրամանով յարութիւն առնելով, պիտի միաւորուին իրանց հոգիներին հետ և կենդանի մնացածներին հետ միասին պիտի դատուին՝ «Պօղոս առաքեալն ասում է՝ Աստծու վրայ յոյս ունիմ, որին դրանք էլ սպասում են, թէ արդարեւ և թէ մեղաւորների յարութիւն պիտի լինի»։ Գործք. ԻԳ. 15: Ամենքս էլ կը ննջենք, բայց ամենքս էլ չենք նորոգուիլ. յանկարծակի ական թօթափելում վերջին փողը հարկանելիս մեռածները յարութիւն կառնեն առանց ապականութեան, և մենք կը նորոգուինք»։ Կորնթ. ԺԵ. 51—52:

Արդարեւ յարմինները յարութիւնից յետոյ կը լինեն փառալոյ՝ «Պօղոս առաքեալն ասում է՝ «Երբ Յիսուս, որ է ձեր կեանքը, կը յայտնուի, այն ժա-

մանակ դուք էլ նրա հետ փառքով կը յայտնուիք» Կոր. Գ. 4: Անապական՝ «Սերմանվում է ապականութեամբ, յարութիւն է առնում առանց ապականութեան» ա. Կորնթ. ԺԵ. 42: Անմահ՝ «Որովհետև այլ ևս չեն կարող մեռնել, քանի որ հրեշտակներին են հաւասար և Աստծու որդիքն են»։ Դուկ. Ի. 36: Պայծառ իբրև արեգակն՝ «Այն ժամանակ արդարեւ արեգակի պէս կը ծագեն երկնքի արքայութեան մէջ»։ Մատթ. ԺԳ. 43:

ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

«Հաւատամք .. 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւն երկնից, և 'ի կեանս յաւիտենական».

Սրանով դաւանում ենք՝ թէ Յիսուս կրկին գալու է աշխարհ և արդարագատ քննութեամբ որոշելով արդարեւներին մեղաւորներից՝ արդարեւներին տալու է իր յաւիտենական արքայութիւնն, իսկ մեղաւորներին՝ մատնելու է դժոգքի յաւիտենական տանջանքին: «Երբ Մարդու Որդին իր փառքով կը գայ ու բոլոր հրեշտակներն էլ իր հետը՝ այն ժամանակ իր փառքի աթոռի վրայ կը նստի և կը ժողովուին նրա առաջ բոլոր ազգերն ու նրանց միմեանցից կը բաժանի, ինչպէս հովիւը բաժանում է իր ոչխարներին այծերից: Ոչխարներին իր աջ կողմը կը կանգնեցնի, իսկ

այծերին՝ ձախ կողմը: Այն ժամանակ թագաւորն աջ կողմն եղածներին կասէ՝ «Յեկէք, իմ հօր օրհնուածնե-
րը, և ժառանգեցէք աշխարհի սկզբից ձեզ համար
պատրաստած արքայութիւնը, որովհետեւ քաղցեցայ և
ուտելիք տուիք, ծարաւեցայ և խմացրիք, օտարական
էի և ինձ ընդունեցիք, մերկ էի և ինձ հագցրիք, հի-
ւանդ էի և ինձ տեսութեան եկաք, բանտումն էին
ու ինձ մօտ եկաք»: Այն ժամանակ արդարները կա-
սեն՝ «Տէր, երբ տեսանք քեզ քաղցած ու կերակրե-
ցինք, կամ ծարաւ ու խմացրինք. երբ տեսանք քեզ
օտար ու պահպանեցինք և կամ մերկ ու հագցրինք.
երբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտի մէջ և եկանք
քեզ մօտ»:

Եւ թագաւորը պատասխան կը տայ և կասէ՝ «Ո-
րովհետեւ իմ այս եղբայրներից ամենափոքրներին ա-
րիք, նշանակում է ինձ արիք»: Այն ժամանակ ձախ
կողմ եղածներին կասէ. «հեռացէք ինձնից, անի-
ծուածներ, յաւիտենական կրակը, որ պատրաստուած
է սատանայի ու նրա հրեշտակների համար, որովհե-
տեւ քաղցեցայ և ուտելիք չտուիք ինձ. ծարաւեցայ
ու չխմացրիք. օտար էի ու չպահեցիք ինձ. մերկ էի,
չհագցրիք ինձ. հիւանդ էի ու բանտումն էի՝ չտե-
սաք ինձ»: Այն ժամանակ նրանք էլ կը պատասխա-
նեն ու կասեն՝ «Տէր, երբ տեսանք քեզ քաղցած,
կամ ծարաւ, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ,
կամ բանտի մէջ ու չծառայեցինք քեզ»: Այն ժամա-
նակ պատասխան կը տայ նրանց ու կասէ՝ «Ծըշ-
մարիտն եմ ասում ձեզ, որովհետեւ այս փոքրիկ
ներից մէկին չարիք, նշանակում է ինձ չարիք. նը-

րանք կերթան յաւիտենական տանջանքն, իսկ ար-
դարները յաւիտենական կեանքը». Մատթ. ԻՃ.
34—46:

Արքայութիւնը մի այնպիսի մեզ անիմանալի վի-
ճակ է, որի մէջ արդարներն յաւիտեան կը վայելեն
Աստծու տեսութիւնը, հրեշտակների և բոլոր սրբերի
հետ բնակակից լինելով, ինչպէս որ սուրբ գիրքն ա-
սում է՝ «Ոչ աչքն է տեսել և ոչ ականջը լսել,
և ոչ էլ մարդու սիրտը զգացել, որպիսին Աստուած
պատրաստեց իր սիրելիների համար». Ա. Կորնթ.
Բ. ԳԼ.:

«Գիտենք՝ երբ նա կը յայտնուի նրա նման կը
լինինք, որովհետեւ տեսնելու ենք Նրան, ինչպէս էն». Ա.
Յով. Գ. 2:

«Եւ մենք՝ կենդանի մնացածներս նրանց հետ
միասին օգով ամպի միջով կը տարուինք Տիրոջ ա-
ռաջ և այնպէս բոլոր ժամանակ Տիրոջ հետ կը լի-
նինք». ա. Թեոսաղ. Դ. 16: «Շատերն արեւելքից և ա-
րեւմուտքից կը գան և կը նստեն Արքանամի, Իսահա-
կի և Յակովբի հետ երկնքի արքայութեան մէջ». Մատթ. Ը. 11:

Դժոգքը մի սարսափելի վիճակ է, ուր մեղաւոր-
ները պէտք է զրկուին Աստծու տեսութիւնից, յա-
ւիտեան պիտի տանջուին իրանց խղճի խայթից և
հետաքրքար նրանք սգի և խաւարի մէջ կապրին.
«Կերթան նրանք յաւիտենական տանջանքը». Մատ.
ԻՃ. 46:

«Եւ կասի՝ չեմ ճանաչում ձեզ, թէ որտեղից էք,
հեռացէք ինձնից բոլոր անիրաւ մշակներդ. այնտեղ

կը լինի լաց և ատամների կրճելը»։ Ղուկ. ԺԳ. 27։
«Եւ արքայութեան որդիներն արտաքին խաւարը կեր-
թան և այնտեղ կը լինի լաց և ատամների կրճելը»։
Մատթ. Լ. 12.

Այսպէս՝ բոլոր մեր սովորած հաւատալիքները
սրանք են՝

1. Աստծու գոյութիւն,
2. Աստծու միութիւն,
3. Աստուածային անձերի երրորդութիւն,
4. Աստծու Կատարելութիւններ կամ Ստորոգե-
լիներ,
5. Արարչագործութիւն,
6. Աստծու նախախնամութիւն,
7. Աստուածորդու մարդեղութիւն,
8. Աստուած Որդու երկրորդ անգամ գալուստը,
9. Սուրբ Հոգու իջնելն Յորդանանի վրայ,
10. Քրիստոսի եկեղեցի և նրա խորհուրդները,
11. Մեռելները յարութիւն և
12. Վերջին դատաստան։

Բացի Նիկիական հանգանակից մեր եկեղեցին ունի իր
«ուղղափառ հաւատի դաւանութիւնը», որ ամեն ժամանակ
պատարագիչ քահանան, առաօտեան ժամասացութիւնից ա-
ռաջ՝ «հրաժարիմք»-ից լետոյ ձեռնամած ասում է՝

«Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ
զՀայրն Աստուած անեղ, անծին և անսկիզբն. ալլև ծնող Որդ-
ւոյ և բղխող Հոգւոյն սրբոյ։

«Հաւատամք դրանն Աստուած, անեղ ծնեալ և սկսեալ
'ի Հօրէ նախ քան զլաւիտեանս, ոչ լետոյ և ոչ կրտսեր, ալլ
որքան Հայրն Հայր, ընդ նմին և Որդին Որդի։

«Հաւատամք զսուրբ Հոգին Աստուած՝ անեղ, անժամա-
նակ, ոչ ծնեալ, ալլ բղխեալ 'ի Հօրէ, էակից Հօր և փառակից
Որդւոյ։

«Հաւատամք զերրորդութիւն սուրբ՝ մի բնութիւն, մի
աստուածութիւն, ոչ երեք աստուածք, ալլ մի Աստուած։ մի
կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երե-
ւելեաց և աներևոյթից։

«Հաւատամք լեկեղեցի սուրբ զթողութիւն մեղաց՝ հա-
ղորդութեամբ սրբոց։

«Հաւատամք զմինն լերից անձանց զԲանն Աստուած,
ծնեալ 'ի Հօրէ նախ քան զլաւիտեանս. 'ի ժամանակի իջեալ
յԱստուածածին կոյս Մարիամ. առեալ յարենէ նորա միաւո-
րեաց ընդ իւրում Աստուածութեանն իննամեալ ժուժկալեալ
յարդանդի անարատ կուսին. և եղև Աստուածն կատարեալ,
մարդ կատարեալ հոգւով և մտօք և մարմնով. մի անձն, մի
դէմ և միաւորեալ մի բնութիւն, Աստուածն մարդացեալ ա-
ռանց փոփոխման և առանց ալլալութեան, անսերմն լղու-
թիւն և անաղական ծնունդ. որպէս ոչ է սկիզբն Աստուա-
ծութեան Նորա՝ և ոչ վախճան մարդկութեան նորա. զի Յի-
սուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և լաւիտեան։

«Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ շրջեալ 'ի վե-
րայ երկրի, լետ երեսուն ամաց եկեալ 'ի մկրտութիւն. Հայր
'ի վերուստ վկայեալ՝ դա է որդի իմ սիրելի, և Հոգին սուրբ
աղաւնակերպ իջեալ 'ի վերայ Նորա. փորձեալ 'ի սատանայէ
և յաղթեալ նմա, քարոզեալ մարդկան զփրկութիւն, աշխա-
տեալ մարմնով, վաստակեալ, քաղցեալ և ծարաւեալ. լետոյ
եկեալ կամաւ 'ի չարչարանս, խաչեալ և մեռեալ մարմնով, և
կենդանի աստուածութեամբն. մարմինն եղեալ 'ի գերեզմանի
միաւորեալ աստուածութեամբն, և Հոգւովն իջեալ 'ի դժոխս՝
անբաժանելի աստուածութեամբն, քարոզեալ հոգւոցն, աւե-

ընալ զդժոխս և աղատեալ զհոգիսն, լետ երկց առուրց լարու-
ցեալ 'ի մեռելոց և երեսալ աշակերտացն:

«Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս նովին մարմ-
նովն համբարձեալ լերկինս և նստեալ ընդ աջմէ Հօր. ալլև դա-
ւոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս
և զմեռեալս, որ և լարութիւն ամենայն մարդկան:

«Հաւատամք և զհատուցումն դործոց, արդարոցն կեանք
յաւիտենական և մեղաւորացն տանջանք յաւիտենական»:



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Յ Ո Յ Ս

Յոյսն աստուածային ներքին շնորհքն է, որով
քրիստոնեայն զօրացած լինելով՝ առանց կասկածի
սպասում է ստանալու Աստծուց խոստացած արդար
վարձատրութիւնը կամ պատիժն իր գործերի համա-
ձայն: Քրիստոս ասում է՝ «Ճշմարիտն եմ ասում ձեզ,
ով իմ խօսքը կը լսի և կը հաւատայ Նրան, որ ինձ
ուղարկեց, կընդունի յաւիտենական կեանքը» Յով.
Ե. 24: Աստծու խոստացած բարութիւններն են յա-
ւիտենական կեանք, հանգիստ և անվախճան երանու-
թիւն. «Նկէք ինձ մօտ ամեն յոգնածներդ և բեռնա-
ւորածներդ և ես ձեզ կը հանգստացնեմ». Մատթ.
ԺԱ. 29:

Մենք հաւատում ենք, որ Աստուած ծայրագոյն
բարի է և թէ նրանով կոչուած ենք միշտ երջանիկ
լինելու թէ այս կեանքում և թէ հանգերձեալումն.
հենց այս հաւատի վրայ հիմնած է մեր յոյսը:

Այսպէս մեր յոյսի առարկան Աստուած է, որով-
հետեւ նա տալիս է մեզ այն շնորհքները, որ իր Որ-
դու միջոցով խոստացել է մեզ ներկայ կեանքի մէջ

և երկրորդ՝ այն յաւիտենական փառքը, որով պիտի փառաւորուենք յաւիտենական հանդերձեալ կեանքում: Մեր փրկարար յոյսն արտայայտելու միջոցն աղօթքն է:

Ա Ղ Օ Թ Ք

Աստծու հետ խօսելը կոչվում է աղօթք:

Աղօթքով նախ՝ մեր սրտի շնորհակալութիւն ենք յայտնում Աստծուն մեր ունեցած բարիքների համար. երկրորդ՝ խնդրում ենք նորանոր հոգևոր և մարմնաւոր բարիքներ և երրորդ՝ փառաբանում ենք նրա անունը. «Ամենից առաջ խնդրեցէք Աստծու արքայութիւնն և այդ բոլորը կը տրուի ձեզ»՝ ասում է Քրիստոս. Մատթ. 2. 33:

Մարդս աղօթքով կարող է մօտենալ Աստծուն և հաստատուիլ հաւատի և յոյսի մէջ:

Աղօթքը լինում է հրապարակական, որ շատ աղօթողների հետ միասին կարդացվում է Աստծու տաճարի մէջ՝ «Նրա տաճարումն ամենքն էլ փառք են տալիս նրան». Մաղ. ԻԸ, 9. և առանձնական, որ կատարում է մարդս ինքն առանձին միայնակ Յիսուսի պատուիրանի համաձայն՝ «Մտի՛ր սենեակդ, և փակի՛ր դռներդ, և ծածուկ աղօթի՛ր քո հօրը». Մատթ. 2. 6:

Յիսուս Քրիստոս մեզ այսպէս սովորեցրեց աղօթել՝ «Նրբ աղօթում էք, շատախօս մի լինիք... այսպէս աղօթեցէք՝

Հայր մեր, որ լերկինս ես,
Սուրբ եղիցի անուն քո,
Եկեսցէ արքայութիւն քո,
Եղիցին կամք քո, որպէս լերկինս և լերի՛րի,
Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր,
Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և
մեք թողումք մերոց պարտապանաց,
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
Այլ փրկեա զմեզ ի չարէ.
Զի քո է արքայութիւն և զօրութիւն և
փառք յաւիտեանս, ամէն»: Մատթ. 2. 7 — 13:

Այս աղօթքի միտքը

Ամենից առաջ զիտակցում ենք, որ Աստուած մեր հայրն է. աշխատում ենք Նրա անսահման Սրբութիւնն, այլև նրա Սէրը՝ Բարութիւնն աչքի առաջ ունենալ, ցանկանալով որպէս զի ամեն մի բան, ինչ որ նրա կամքին հակառակ է, մեր սրտներում տեղ չունենայ, ձգտում ենք վերականգնելու երկնքի Արքայութիւնը: Սրանից յետոյ մենք խնդրում ենք, որպէս զի նա մեզ տայ ամեն բան, ինչ որ հարկաւոր է մեր գոյութիւնը պահպանելու համար, որ նա մեր մեղքերն և թոյլ կողմերը մեզ ներէ, ինչպէս որ մենք ներում ենք մեզ վշտացնողներին և մեր դէմ մեղանշողներին: Խնդրում ենք, որ մեզ վատ ազդեցութիւն

նից հեռու պահէ և պաշտպանէ մեզ նրանից:

Վերջապէս՝ մենք յոյս ենք դնում Յաւիտենական Բարիքի զօրութեան, մեծութեան և տէրութեան վրայ:

Այս աղօթքն անուանւում է տէրունական աղօթք և բաժանւում է երեք գլխաւոր մասերի՝ ա) Կոչումն, բ) Խնդրուածներ և գ) Փառաբանութիւն:

ա. Կոչումն է

Հայր մեր, ող լերկինս ես:

Այս խօսքերով Քրիստոս մեզ սովորեցնում է, որ Աստծուն Հայր անուանենք, որովհետեւ Նա մեզ համար հոգում է և կերակրում, իր ողորմութեամբ մեզ քրիստոնեաներիս որդի անուանեց. Նա մեզ սիրում է հօր պէս և պատրաստ է ամեն բանում մեզ օգնելու: Որ յերկինս ես, ասում ենք այն պատճառով, որ մեր ուշքն ու միտքն երկրաւոր կեանքից վերացնելով՝ հոգեւոր կեանքն աչքի առաջ ունենանք աղօթելու ժամանակ:

բ. Խնդրուածներն եօթն են՝

1. Սուրբ եղիցի անուն քո:

Սրանով մենք խնդրում ենք, որ Նա մեզ տայ կարողութիւն, շնորհք իր սուրբ անունը մեր մէջ մաքուր, սուրբ պահելու. կարողութիւն տայ, որ Հայր գործերից հեռու մնանք, այսինքն Աստծուն պատուենք սուրբ սրտով, սուրբ խօսքով և մաքուր գործով:

Եթէ մենք ստախօսութիւնից, իրար մատնելուց, բամբասելուց, ուրիշին ծաղրելուց, հայհոյելուց և ուրիշ սրանց նման մեղքերից հեռու կը մնանք, այն

ժամանակ Աստծու անունը սուրբ պահած կը լինենք՝ «Կը տեսնեն ձեր բարի գործերն և կը փառաւորեն ձեր հօրը, որ երկնքումն է». Մատթ. Ե. 18, սրան հետևում է

2. Եկեսցէ արքայութիւն քո:

Սրանով մենք խնդրում ենք, որ Աստուած մեզ շնորհք, կարողութիւն տայ, որպէս զի մեղքից հեռանաք և Նրա արքայութիւնը—սրբութիւնը մեր սրտի մէջ բնակի. իսկ եթէ մեր սրտի մէջ սրբութիւնը կը բնակի, կը նշանակէ, որ մեր մէջ բնակում է Աստուած, որովհետեւ ինքն Աստուած սրբութիւն է՝ ինչպէս Քրիստոս ասում է՝ «Աստծու արքայութիւնը նկատելի նշանով չի գայ... այլ Աստծու արքայութիւնը ձեր ներսն է». Լուկ. Ժէ. 20, և ապա կարող ենք ասել՝ որ երկնքի արքայութիւնը գործնական քրիստոնէութեան կենդրոնատեղն է. Նա ներկայացնում է մի համերաշխ պայման, որի մէջ Աստուածային կամքն իրականանում է կատարելութեան մէջ. դա նշանակում է, ինչպէս անհատի, այնպէս և հասարակութեան, ամենաբարձր վիճակը, որպիսին միայն մենք կարող ենք երևակայել: Մեր բոլոր ջանքերն ուղղակի և թէ անուղղակի պիտի ուղղած լինին թեթեւացնելուն Նրա ճանապարհը թէ մեր սրտներումն, թէ մեր կեանքումն և թէ մեր ընկերների կեանքումը: Հենց այս է հասարակութեան իդեալական այն վիճակը, որի հասնելուն ձգտում են բոլոր բեֆօրմատօրները. դա է զիտակցական գոյութեան իդեալը, որին ձգտում են բոլոր սրբերը:

3. Եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի:

Այս խօսքերով խնդրում ենք, թէ ինչ որ մենք գործում ենք և կամ ինչ որ մեզ է պատահում—այս բոլորը ոչ թէ մեր ցանկացածի պէս լինի, այլ ինչպէս որ Դու, Աստուած, կամենում ես. և յայտնում ենք մեր որդիական հնազանդութիւնն այն բոլորն ընդունելու, ինչ որ Նա կը բարեհաճի մեզ տալ, որովհետեւ ինքն Աստուած գիտէ, թէ մեզ որ ժամանակ ինչ բան է հարկաւոր ու խնդրողին էլ ողորմածաբար տալիս է: «Դու, Տէր ամենակալ, մեր պէտքերն և կարիքներն անելի լաւ գիտես, քան թէ մենք խնդրում ենք և իմանում»: Ժամագիրք.

Նաև խնդրում ենք, որ մեզ կարողութիւն տայ իր կամքն այնպէս կատարել, ինչպէս որ երկնքում հրեշտակներն և արդարները կատարում են:

4. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ ալսօր:

Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուած մեզ տայ մեր արդար վաստակով մեր մարմնի համար ամենակարեւոր պիտոյք—ուտելիք, խմելիք, հագնելիք, բնակարան, որպէս զի կարողանանք ապրել:

Նաև խոստովանում ենք, որ մեր օրական հացը միանգամից ամեն ժամանակի համար չենք խնդրում, այլ մենք սիրով և այսօր, և վաղը, և միւս օրը, և ամեն ժամանակ չպիտի դադարենք Աստծուն աղաչելուց և մեր օրական հացը խնդրելուց: Այս պատճա-

ռով Քրիստոս ասում է՝ «Ձեր երկնաւոր հայրը գիտէ, թէ այդ բոլորը ձեզ հարկաւոր է, բայց ամենից անաջ խնդրեցէք Աստծու արքայութիւնն և նրա արդարութիւնն ու այդ բոլորը կը տրուի ձեզ»: Մատթ. Գ. 4:

5. Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց:

Այս խօսքերով խնդրում ենք մեր պարտքերն, որ են մեր մեղքերը՝ մեզ ներել, ինչպէս որ մեր դէմ մեղանշողներին ներում ենք:

Աստուած մեզ տուել է օրէնք, եթէ այդ օրէնքը, պատուիրանը չենք կատարում, նշանակում է, որ մենք պարտական ենք մնում Աստծուն—մեղք ենք գործում. եթէ մենք Աստծուց մեր մեղքերի թողութիւն ենք խնդրում, սակայն մեր ընկերներին չենք ներում, այն ժամանակ Աստուած էլ մեզ չի ներիլ. աղօթողը պիտի խաղաղ հոգի և սէր ունենայ դէպի իր ընկերները՝ Քրիստոս ասում է՝ «Եթէ մարդկանց կը ներէք իրանց յանցանքը, ձերն էլ կը ների ձեր երկնաւոր հայրն. իսկ եթէ չէք ների մարդկանց, և ոչ էլ ձեր հայրը ձեզ կը ների»: Մատթ. Զ. 14, 15:

6 Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն:

Սրանով խնդրում ենք մեզ հեռու պահել վատ պատահմունքներից, որոնք կարող են մեզ մեղքի մէջ ձգել. նաև խնդրում ենք զօրութիւն տալ մեզ փորձանքներին դիմադրելու:

7. Այլ փրկեա՛ զմեզ ի չարէ:

Սրանով խնդրում ենք ազատել մեզ ամեն տեսակ թշուառութիւնից և անարդարութիւնից. հեռու պահել մեզ վատ մարդիկներից և վատ ճանապարհներից:

Այս եօթն խնդրուածներէից միմիայն չորրորդը վերաբերում է մեր մարմնական պիտոյքներին, իսկ մնացեալ վեցը՝ հոգուն: Սրանով Յիսուս մեզ պարզ հասկացնում է, որ մարդս իր հոգու փրկութեան համար աւելի պիտի մտածէ, մեծ զգուշութիւններ պիտի բանացնէ, որպէս զի հոգին չկորչի:

Գ. Փառաբանութիւնն է՝

Ձի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք չաւիտեանս, ամէն:

Այս խօսքերով մենք աղօթողներս Աստծուն փառաբանում ենք, յայտնում ենք մեր շնորհակալութիւնն և յոյսն այն բանի մասին, որ Աստուած մեր խնդրուածը կը կատարի. յայտնում ենք, որ ամեն բարիք Աստծուն է պատկանում, նրա իշխանութեան տակն է գտնվում այն բոլորն, ինչ որ խնդրում ենք. Դու, Աստուած, զօրութիւն ունիս մեր խնդրուածքը տալու և քեզ պատկանում է յաւիտենական փառքը: Ամէն ասելով խոստովանում ենք, թէ վերև ասածներն իրաւ է, այդպէս լինի,—ցոյց է տալիս, որ մենք՝ աղօթելով, Աստծու վրա յոյս և հաւատ ունինք:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ս Է Բ

Աստծուն սիրելը մի ներքին շնորհ է, որով առաջնորդվում ենք այս աշխարհումս Աստծու կամքի համաձայն ապրելու՝ այսինքն մեր բոլոր կեանքով Աստծուն նուիրուելու:

Մեր սիրոյ առարկան Աստուած է, սակայն Յիսուս Քրիստոս սովորեցրեց մեզ, թէ չենք կարող Աստուած սիրել առանց մեր ընկերները սիրելու, ուստի և ասաց Նա օրինականին՝ «Սիրիր քո Տէր Աստծուն քո բոլոր սրտով և քո բոլոր մտքով. սրա նման սիրիր քո ընկերոջ, ինչպէս քո անձը. այս երկու պատուիրաններից կախուած են բոլոր օրէնքներն և մարգարէները». Մատթ. ԻԲ. 37:

Քրիստոնեայն կատարեալ սիրով սիրած կը լինի Աստծուն, երբ նա նրա բոլոր պատուիրանները կամ օրէնքները կատարում է լրիւ, որովհետեւ այդ ամենն առաջացած լինելով միւսոյն աղբիւրից հաւասարապէս պարտաւորական են մեզ համար՝ Քրիստոս առում է՝ «Աստծուն սիրելն այն է, որ նրա պատուիրանները կատարենք, իսկ նրա պատուիրանները ծանր չեն». Յով. Ե. 3:

Քրիստոնեայն չէ կարող արդարութիւն ձեռք բերել Աստծու օրէնքները միմիայն արտաքին ձևով (ինչպէս փարիսեցիները) կատարելով, այլ անկեղծութեամբ ընդունելով աւետարանական ճշմարտութիւններն, այն է հաւատով միանալով Յիսուսի հետ. իսկ հաւատը մեռած է առանց սիրոյ, առանց այն մեծ շնորհքի, որ զրեց Յիսուս մեր հոգու մէջ և որ կենդանացնում է մեզ, լուսաւորում և առաջնորդում դէպի յաւիտեանական երջանկութիւնը:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՕՐԷՆՔ

Բարի գործերի համար ստեղծուածներս (Յփես. Բ. 16) Աստծուց ստացել ենք միջոցներ բարին չարից շոկելու: Այս միջոցներն երկու տեսակ են՝ աստուածային ներսի օրէնքն կամ խղճմտանքի ձայնն, և աստուածային արտաքին օրէնքը՝ կամ Աստծու պատուիրանները: Որովհետեւ այս օրէնքով որոշվում է, կանոնաւորվում է մարդկանց կեանքն ու գործունէութիւնն, ուստի ասվում է բարոյական օրէնք: Ներսի օրէնքն ուրիշ խօսքով ասվում է բնական բարոյական օրէնք, արտաքինը՝ գերբնական, յայտնուած՝ գրաւոր օրէնք:

Բ Ն Ա Կ Ա Ն Օ Ր Է Ն Ք

Բնական օրէնք ասելով հասկանում ենք այն օրէնքը, որ Աստուած զրել է մեր հոգու՝ սրտի մէջ և ցոյց է տալիս մեզ թէ որն է բարին, և որը չարը, թէ

ինչ պէտք է գործենք, և թէ ինչ բանից պէտք է հեռանանք: Այս օրէնքն ամեն մարդու մէջն է, որ է խղճմտանքը, որ մեր կեանքը ղեկավարողն է, նա մեր արարքների վկայն է և դատաւորը. այս պատճառով է զուր չէ որ մարդիկ խղճմտանքին անուանում են «Աստծու ձայն»: Ով որ խղճմտանքի համաձայն է ապրում, այնպիսին երջանիկ է իր ամբողջ կեանքումն, մինչև անգամ մահուան անկողնումն. իսկ նա, ով որ խղճմտանքի հակառակ կեանք է վարում, այնպիսին չէ կարողանում նրա խայթերից փախչիլ ու ծածկուիլ, ինչպէս որ, օրինակ, եղբայրասպան Կայէնը:

Խղճմտանքը մեր հոգու կարողութիւններից մին լինելով՝ հոգու հետ սերտ կապ ունի և կախումն ունի հոգու զարգացումից ու կատարելութիւնից. պատճառն այս է, որ զանազան տեսակ զարգացած մարդկանց խղճմտանքը զանազան է իրարից և մինչև անգամ իրար հակադիր:

Նախամարդկանց՝ պատուիրանը չկատարելուց յետոյ, հոգին կորցնելով իր սրբութիւնը՝ խղճմտանքն էլ խաւարեց, աղօտացաւ: Թէև մեր խղճմտանքը, որ է բարոյական օրէնք, ինքն ըստ ինքեան գոհացուցիչ է, որի համար որ նշանակուած է նա (Հռով. Ա. 19—30), սակայն մարդիկ մեղքի մէջ ընկնելով՝ նրանց խղճմտանքն էլ խաւարեց, և այդ էր պատճառը, որ խաւարած խղճմտանքը բարոյական անկման մէջ թափող մարդկանց չէր կարողանում ուղղել և հասցնել բարոյական կատարելութեան: Բարոյական օրէնքի այս թերութիւնը նրանից է երևում, որ ընկած մարդը խղճմտանքի ղեկավարութեամբ պարզ

կերպով չէ կարողանում իրան Աստծու կամքը ներկայացնել, ուստի չէ կարողանում գնահատել նա բարոյական կեանքն ու գործունէութիւնը, թէ ինքն բարոյական օրէնքի համաձայն է ապրում, թէ ոչ:

Արդ՝ եթէ բնական օրէնքը գոհացուցիչ չէ ընկած մարդուն դէպի բարոյական կատարելութիւն ու փրկութիւն տանելու համար, եթէ այդ օրէնքը մեր մէջ խաւարած ու աղօտ է երևում, ապա ուրեմն՝ անհրաժեշտ է ունենալ լոյսի մի այլ աղբիւր, որ կարողանայ այդ օրէնքը լուսաւորել ու պարզել, լրացնել ու զօրացնել նրան: Ընկած մարդու այս կարիքին ինքն ամենաբարի Աստուած օգնութեան հասաւ՝ պարզեցնելով յայտնուած կամ գրաւոր օրէնք: Հին կտակարանում այս օրէնքն Աստուած տուեց Մովսէս Մարգարէի ձեռքով, իսկ Նոր կտակարանում՝ Յիսուս Քրիստոսի ձեռքով:

ՅԱՅՏՆՈՒԱԾ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՕՐԷՆՔ

Ա. Հ ի ն օ ը է ն ք

Հին օրէնքները նրանք են, որոնք Աստուած տուեց իսրայէլացիներին Մովսէս մարգարէի ձեռքով:

Այս օրէնքները բաժանվում են երեք կարգի՝ ա) Արարողական կամ Ծիսական, բ) Դատաստանական և գ) Բարոյական:

Արարողական կամ ծիսական այն օրէնքներն են, որոնք Աստուած սահմանեց հին ուխտի մէջ աստուածապաշտութեան կարգն ու արարողութիւնները կատարելու ձևերի մասին:

Դատաստանական այն օրէնքներն են, որոնք Աստուած կարգեց Իսրայէլի որդիներին յանցանքի համաձայն պատժելու:

Թէ արարողական և թէ դատաստանական օրէնքները քրիստոնեաների համար դադարած են, որովհետեւ Պօղոս առաքեալի ասութեան համաձայն՝ «Մենք ոչ թէ օրէնքի տակ ենք, այլ՝ շնորհքի տակ»։ Հռով. 2. 14:

Իսկ բարոյական օրէնքներն, որոնք տասնաբանեայ պատուիրաններն են, կարևոր բացատրութեամբ աւելի պարզուեցան և հաստատուեցան մեզ համար Յիսուս Քրիստոսով՝ որ ասում է՝ «Միք կարծի, թէ եկայ օրէնքներն և մարգարէները քանդելու, չեկայ քանդելու, այլ լրացնելու»։ Մատթ. Ե. 17:

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ

ա. Ես եմ քո Տէր Աստուածն և ուրիշ աստուածներ չունենաս բացի ինձնից:

բ. Ոչ մի բանի նմանութիւնով կուռք մի շինիր. երկրպագութիւն մի տուր և մի պաշտիր նրանց:

գ. Զուրաւել քո Աստծու անունը մի յիշիր:

դ. Շաբաթ օրը սուրբ պահիր:

ե. Պատիւ տուր քո հօրն և մօր, որ քեզ համար լաւ լինի և երկար ապրես երկրի վրայ:

զ. Սպանութիւն մի անիր:

է. Շնուրթիւն մի անիր:

ը. Գողութիւն մի անիր:

Թ. Սուտ վկայութիւն չտաս ընկերոջդ մասին:

Ժ. Մի ցանկանայ քո ընկերոջ տանն և այն բոլորին ինչ որ նրանն է:

Այս պատուիրաններն ընդհանրապէս առնելով ընդգրկում է մարդու ամբողջ կեանքն իր բոլոր յարաբերութիւններով ու գործունէութեամբ: Առաջին չորս պատուիրանները հրամայում են սիրել Աստծուն, իսկ քսաներեքը՝ ընկերոջ, իսկ վերջին պատուիրանների մէջ բովանդակած են և պարտաւորութիւնները դէպի մեր անձն, որովհետեւ ընկերոջ պէտք է սիրել, ինչպէս որ մենք մեր անձն ենք սիրում:

ա. Ես եմ քո Տէր Աստուածն, ուրիշ աստուածներ չունենաս բացի ինձանից:

Այս խօսքերով Աստուած հրամայում է ճանաչել նրան միակ ճշմարիտ Աստուածը, հաւատալ նրան, յոյս դնել նրա վրայ, սիրել նրան, վախենալ նրանից, երկրպագել և աղօթել նրան:

Արգելում է անաստուածութիւնը, կռապաշտութիւնն, անհաւատութիւնն և յուսահատութիւնը:

բ. Ոչ մի բանի նմանութիւնով կուռք մի' չինիր. երկրպագութիւն մի' տուր և մի' պաշտիր նրանց:

Սրանով Աստուած մեզ արգելում է նիւթապաշտութիւն, կեղծաւոր աստուածապաշտութիւն, արբեցութիւն, որկրամոլութիւն, արծաթսիրութիւն... այլ հրամայում է զրանց դէմ առաքինութիւն գործել:

գ. Զուրտեղ քո Աստծու անունը մի' չիշիր:

Այս խօսքերով Աստուած հրամայում է, որ մեր խօսակցութիւնների մէջ Աստծու անունն երկիւղով յիշենք. նրա անունով միմիայն ճշմարիտ գործերի համար երդուենք և այն էլ շատ կարեւոր ժամանակ:

Արգելում է Աստծու անունն ամեն բանի համար թեթեամտութեամբ յիշել, առանց հարկաւորութեան երդուել Աստծու անունով, կեղծաւորութեամբ աղօթել, եկեղեցու մէջ խօսել կամ ծիծաղել...

դ. Շաբաթ օրը սուրբ պահիր:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է կիրակի և տօն օրերը պահել, առանց ծուլանալու եկեղեցի գնալ և այնտեղ Աստծուն աղօթել, ամբողջ օրը բարի գործերին նուիրել, սուրբ գիրքը կարդալ, խղճմը տանքը քննել և գործած սխալանքը զղշալ, աշխատել մեր նմաններին բարութիւն անել, աղքատներին ողորմութիւն տալ, հիւանդներին այցելել, վատ գործերից հեռանալ, մարմնաւոր աշխատութիւնը դադարեցնել, այսինքն առևտուրը, վարուցանքն, արհեստը...

Տ Օ Ն Ե Ր

Տօները նուիրած են Յիսուսին, Աստուածածնին, Սրբերին և երկնային զօրաց: Այս պատճառով էլ տօները լինում են Տէրոնական, Աստուածածնի և Սրբե-

ըի. սրանցից մի քանիսն անշարժ տօներ են, իսկ մի քանիսն էլ շարժական:

Անշարժ կոչվում են այն տօները, որոնք ամեն տարի միևնույն ամսաթուին են լինում:

Շարժական կոչվում են այն տօները, որոնք որոշեալ ամսաթուներ չեն ունենում, որովհետև Զատիկն ամեն տարի միևնույն ամսաթուին չէ պատահում, և որովհետև տօներից մեծ մասը կախումն ունի Զատիկից, այս պատճառով տօներն էլ շարժական են:

Անշարժ տօներն են՝ Աւետումն (7-ին ապրիլի), Ծնունդ և Մկրտութիւն Քրիստոսի (6 յունուարի), Տեառնընդառաջ (14-ն փետրվ.), Յղութիւն Աստուածածնի (9-ին դեկտ.), Ծնունդ Աստուածածնի (8 սեպտ.), ՚ի տաճար Ընծայումն Աստուածածնի (21-ին նոյեմբ.), իսկ մնացեալ թէ՛ տէրունական և թէ՛ սրբերի տօները շարժական են:

Տէրունական տօներն են՝

Աւետումն, Աստուածայայտնութիւն, Թլխատութիւն, Տեառնընդառաջ, Ծաղկազարդ, Զատիկ կամ Պասեք, Համբարձումն, Հոգեգալուստ, Վարդափառ—Պայծառակերպութիւն Քրիստոսի և Սուրբ Խաչ:

Աստուածածնի տօներն են՝ Վերափոխումն, Յղութիւն Աննայից, Ծնունդն, Երից ամաց ընծայումն ՚ի Տաճար:

Սրբերի տօներն են՝ Թադէոսի և Բարդուղիմէոսի երկու տօները, Լուսաւորչի երեք տօները, Հրեշտակապետաց, Ամենայն սրբոց, Սուրբ Էջմիածնի տօն (եկեղեցու տօն), սուրբ Թարգմանիչների—սուրբ Սա-

հակի և սուրբ Մեսրոպի, Սրգար և Տրդատ Թագաւորների, Սուրբ Ղևոնդեանց և Սուրբ Վարդանանց տօները, նաև երեք տիեզերական սուրբ ժողովների տօներն և այլն:

Ե. Պատիւ տո՛ւր քո հօրն ու մօրը, որ քեզ համար լաւ լինի և երկար ապրիս աշխարհիս վրայ:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է սրբտով և գործով պատուել, սիրել, հնազանդուիլ, ծառայել և ոչ մի բանով չանպատուել մեր ծնողներին, մեր մեծամեծներին, եկեղեցական հովիւներին, բարերարներին, ուսուցիչներին և առհասարակ այն բոլոր անձերին, որոնք մեր բարիքների համար աշխատում են:

Սրբելում է անհնազանդութիւն, օրինազանցութիւն, ապստամբութիւն, ապերախտութիւն....:

Զ. Սպանութիւն մի՛ անիր:

Այս խօսքերով Աստուած արգելում է, որ մարդս իրան կամ ուրիշին սպանի գործիքով և թէ խօսքով. արգելում է ուրիշի կամ իր մահը ցանկալ և կամ նպաստել այդ բանին. արգելում է ատել, նախատել, մատնել, կռուել, ընկերին վատաբանել կամ բամբասել, ընկերներին գայթակղեցնել վատ օրինակներով....:

Է. Շնութիւն մի՛ անիր:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մա-

քուր լինել. արգելում է սրտի չար ցանկութիւններ, չար մտածմունքներն, իր վատ բովանդակութեամբ խօսակցութիւններն և երգերը...:

Ը. Գողութիւն մի՛ անի՛ր:

Սրանով Աստուած արգելում է ամեն տեսակ գողութիւն և յափշտակութիւն, արծաթսիրութիւն, վաճառականութեան մէջ խաբէութիւն, կռքի և չափի մէջ խարդախութիւն, աղքատներին զրկել, մշակների և ծառաների վարձը կտրել, պարտքը չվճարել, պահտուածն յետ չդարձնել...:

Հրամայում է ամեն բանի մէջ ճշմարտութիւն, արդարութիւն ունենալ:

Թ. Քո ընկերոջ մասին սուտ վկայութիւն մի՛ տո՛ւր:

Սրանով Աստուած արգելում է ամեն տեսակ ստախօսութիւն թէ ատենի առաջ և թէ հասարակութեան մէջ. արգելում է վատաբանել, չարախօսել, բամբասել, անարժաններին գովել:

Հրամայում է ճշմարտախօս լինել, ամեն տեղ և ամեն ժամանակ ասել «այո՛ւն՝ այո՛ւ. և ոչն՝ ո՛չ»:

Ժ. Քո ընկերոջ տան վրայ աչք մի՛ ունենար և ոչ այն բաների վրայ, ինչ որ նւրանն է:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեր ընկերների վրայ չունենալ չար աչք, չար ցանկութիւն. մեր ընկերների թէ ներքին և թէ արտաքին

լաւ կողմերի վրայ չնախանձել, ընկերներից ոչ մի բան չյափշտակել, այլ Աստուած ինչ որ մեզ տուել է, նրանով էլ բաւականաւ. ուրիշներին չվնասել, մի խօսքով հրամայում է մեր ընկերներին ճշմարտութեամբ սիրել ու բարի անել:

Բ. Նոր օրէնք

Նոր օրէնքները Յիսուսից մեզ տուած վարդապետութիւններն են, որոնք առաքեալների և սրանց յաջորդների միջոցով աւանդուած են մեզ. Յիսուս մեզ նոր օրէնք տալով տասը պատուիրանները ոչ թէ վերացրեց, այլ հաստատեց ասելով՝ «Միք կարծիլ, թէ եկայ օրէնքներն և մարգարէները քանդելու, չեկայ քանդելու, այլ լրացնելու» (Մատթ. Ե. 17). Նա օրէնքը նրանով կատարելագործեց, որ մեռած տառերով չէր հասկանում, այլ կենդանի գործով: Փարիսեւիներն օրէնքը տառացի էին կատարում, շաբաթ օրը հանգստանում էին և ոչինչ չէին գործում, այն ինչ Յիսուս օրէնքը կատարում էր նրա ոգուն նայելով — բարի, սիրոյ գործեր էր կատարում շաբաթ օրը:

Նոր օրէնքը հիմնուած է հետեւեալ սկզբունքի վրայ՝ «Ինչ որ կամենում էք, որ մարդիկ ձեզ անեն, նոյնն արէք և դուք նրանց». Մատթ. Է. 12:

Նա հրամայում է ապաշխարել մեր մեղքերն, առանց որի մեղաւորին փրկութիւն չկայ, անձնատուր չլինել աշխարհի անցաւոր փառքերին և վայելչութիւններին, ներել միմեանց, ողորմել աղքատներին, սիրել Աստծուն ամենայն անձնուիրութեամբ,

սիրել ընկերին իր անձի պէս, լինել մարդասէր և քարեացակամ ամենքի համար:

Քրիստոսի բարոյական վարդապետութիւնը համառօտուած է ինն երանութիւնների մէջ՝

Ա. Երանի հոգւով աղքատներին, որովհետեւ նրանց ըն է երկնքի արքայութիւնը:

Բ. Երանի սգաւորներին, որովհետեւ նրանք կը մխիթարուին:

Գ. Երանի հեղերին, որովհետեւ նրանք ժառանգելու են երկիրը:

Դ. Երանի նրանց, որոնք քաղցած և ծարաւի են արգարութեան, որովհետեւ նրանք յագենալու են:

Ե. Երանի ողորմածներին, որովհետեւ նրանք են ողորմութիւն գտնելու:

Զ. Երանի նրանց, որոնք սուրբ են սրտով, որովհետեւ նրանք են Աստծուն տեսնելու:

Է. Երանի խաղաղարարներին, որովհետեւ նրանք են Աստծու որդիներ կոչուելու:

Ը. Երանի նրանց, որ արդարութեան համար են հալածվում, որովհետեւ նրանցն է երկնքի արքայութիւնը:

Թ. Երանի ձեզ, երբ կը նախատեսն ձեզ և կը հաւածեն և ինձ համար վրաներդ չարախօսութիւն կանեն, ցնծացէք և ուրախ եղէք, որովհետեւ ձեր վարձը շատ պիտի լինի երկնքում: (Մատթ. Ե. 3—12):

Որպէս զի պարզ տեսնենք, թէ Քրիստոսի նոր օրէնքը որքան բարձր և խորին բարոյական վարդապետութիւն է չեղեացնում, անհրաժեշտ է ուսումնասիրել ալլ երանութիւնները, որոնց մէջ ցոյց է տուած բարոյական կատարե-

ղութեան ամենաբարձր իղեալն (ղերակալ) և նրան հասնելու ճանապարհը:

Երանութիւնների մէջ սկզբնական առաքինութիւնը համարվում է հոգւով աղքատութիւն: Հոգւով աղքատը միշտ դժգոհ է, որ քիչ բարի գործեր է կատարում, ալսինքն բնականաբար ձգտում է ղէպի բարոյական գործունէութիւնը, ղէպի բարոյական հարստութիւնը: Աստծու շնորհքի օգնութեամբ՝ իսկապէս նա ստանում է ալլալսի հարստութիւնը (Բ. Կորնթ. Թ. 8):

Մարդն երբ խոստովանում է, որ քիչ բարի գործեր ունի կատարած, իրանից դժգոհ է լինում, ուստի նրա մեղքերի վրայ ողբալը, սգալը բնականաբար հետևանք է նրա հոգևոր աղքատ լինելուն. սակայն մի ալսալսի զղջումն գրաւական է մարդու ուղղուելուն՝ բարոյական հարստութիւնը ձեռք բերելուն: Սրա համար էլ Փրկիչը խոստանում է ալսալսի մարդկանց մխիթարութիւն:

Այն մարդը՝ որ խոստովանում է իր պակասութիւններն ու ճամբարի սրտով զղջում, բնականաբար միևնոյն պակասութիւններն միւս մարդկանց լատուկ համարելով՝ ներողամիտ է լինում ղէպի նրանց: Սրանից տեսնում ենք, որ մարդու հեղութիւնն երկու նախընթաց առաքինութիւնների հետևանքն է:

Աղքատութեան սերտ կերպով լծորդակից են թէ քաղցն և թէ ցարաւը: Մարդն՝ զգալով քաղցի ու ծարաւի պահանջը ցոյց է տալիս, որ դեռ նրա հոգին փչացած չէ, ապականուած չէ, և թէ նա ընդունակ է կերակուրն ընդունելու և իւրացնելու, երբ նրան կը տան: Այլն ալլ պահանջը մարդուն ստիպում է միջոցներ որոնելու իր քաղցին բաւականութիւն տալու համար, որով իր մէջ պահպանում է հոգու գործունէութիւնը: Տէրն ալսալսի մարդկանց խոստանում է լազեցնել, բաւականութիւն տալ:

Քաղցած ու ծարաւ մարդը լաւ է հասկանում նոյնատեսակ պակասութիւնները միւսների մէջ, միշտ կարեկցում է նրանց և սրտով ցանկանում է նրանց վիճակը թելադրել:

աղպիսի մարդու մէջ առաջանում է ողորմածութեան զգացմունքը դէպի իր ընկերը:

Երբ մարդս վերոնշեալ երանութիւնների յատկութիւնները զգացել է ու փորձով տեսել, աղպիսին ստանում է սրտի մաքրութիւնը, մի աղպիսի կեցութիւն, որպիսին իշուած է վեցերորդ երանութեան մէջ:

Մաքուր սիրտն ունեցող մարդն աշխատում է միւս մարդկանց մէջ էլ սուրբ, մաքուր, պարզ սիրտ գտնել իրար հետ լարաբերութիւններ ունեցած ժամանակ: Այս պատճառով, երբ մարդկանց մէջ մտերիմ սրտանց լարաբերութիւններն վերանում են ու նրանց մէջ թշնամութիւն է սերմանվում, այն ժամանակ սուրբ սիրտն ունեցողը աշխատում է նրանց մէջ վերականգնել առաջնապէս խաղաղասիրական լարաբերութիւնները ու թշնամութիւնն հեռացնել: Այսպէս ուրիշների մէջ խաղաղութիւն ձգելը մաքուր սրտի բնական հետեւանքն է:

Որովհետեւ մարդկանց մէջ խռովալուրդ լարաբերութիւնները մեծ մասամբ արդարութեան պահանջները չկատարելուց են առաջանում, ուստի ճշմարիտ խաղաղասէրը հոգս է տանում ոչ թէ միայն մարդկանց իրար հետ հաշտեցնելու մասին, այլև ալդ լարաբերութիւններն արդարութեան սկզբունքների վրայ ամբապնդելու մասին: Այս առաքինութիւնը՝ նախընթացի հետ սերտ միացած՝ արտայայտում է ութերորդ երանութիւնը:

Բայց արդարութեան սկզբունքների հիման վրայ հաշտեցնելը հաստատ և լուսալի կարող է լինել միայն այն ժամանակ, երբ հիմնուած է դա լաւիտենական Արդարութեան—Յիսուս Քրիստոսի վրայ: Այս պատճառով, նրանք, որոնք ցանկանում են ուրիշներին հաշտեցնել և նրանց կեանքը Քրիստոսի—լաւիտենական Արդարութեան վրայ հիմնել, պէտք է իրանց մէջ զգան քրիստոնէական զարկն և ալդ կեանքի մէջ թափանցեն ու պատրաստ լինեն ուրախութեամբ համբերելու ամեն տեսակ նախատինքն ու հալածանքն ամեն բանի համար: Սրանից տեսնում ենք, որ վերջին առաքինութիւնը բնականաբար կապվում է նախընթացի հետ:

Մ Ե Ղ Ք

Աստծու հրամաններին անհնազանդ լինելը կամ խղճմտանքի հակառակ գործելն ասվում է մեքք՝ «Մէկ մարդու անհնազանդութեամբ շատ մեղաւորներ եղան» Հռով. Ե. 29.

Մեղքի հետեւանքը մահ և դատապարտութիւն եղաւ: «Մէկ մարդուց աշխարհ մտաւ մեղքը, ու այն մեղքից էլ՝ մահը»։ Հռով. Ե. 12:

Մեղքը լինում է սկզբնական և ներգործական:

Սկզբնական այն մեղքն է, որ մեր նախամարդիկ իրանց անհնազանդութեամբ գործեցին, որին ենթակայ են մարդիկ մինչև յանուն Յիսուսի կամ ամենասուրբ երրորդութեան մկրտուին:

Ներգործական այն մեղքն է, որ մարդս գործում է մկրտութիւնից յետոյ:

Ներգործական մեղքը լինում է թեթեւ ու մահուհալի:

Թեթեւ այն մեղքն է, որ մարդս աւամայ տկարութիւնից ստիպուած գործում է, որի համար Քրիստոս ասում է՝ «Ծառան որ իր տիրոջ կամքը չգիտէ և ծեծի արժանի բան կը գործէ, քիչ ծեծ կուտի» Ղուդ. ԺԲ. 48:

Մահացու այն մեղքն է, որ մարդս գործում է գիտութեամբ իր և իր ընկերներին վնասելու նպատակով, որով զրկվում է արդար և լաւիտենական երջանկութիւնից և Աստծու հետ հաղորդակցութիւնից:

Մահացու մեղքերն եօթն են՝ Հպարտութիւն,

Նախանձ, Բարկութիւն, Ծուլութիւն, Ագահութիւն,
Որկրամոլութիւն և Բղշխոհութիւն:

Սկզբնական մեղքից ազատվում ենք մկրտութեամբ, իսկ
ներգործականից՝ ապաշխարութեամբ և հաղորդութեամբ: Հա-
ղորդուելուց առաջ պէտք է խոստովանուինք քահանայի ա-
ռաջ ասելով զղջումս՝

Մեղայ ամենասուրբ երրորդութեան՝ Հօր և Որդ-
ւոյ և Հոգւոյն սրբոյ: Մեղուցեալ եմ Աստուծոյ: Խոս-
տովանիմ առաջի Աստուծոյ՝ և Սրբուհւոյ Աստուա-
ծածնին, և առաջի քո, հայր սուրբ, զամենայն մեղս,
զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ և
գործով. կամայ և ակամայ, գիտութեամբ և անգի-
տութեամբ, մեղայ Աստուծոյ:

Մեղայ զօրութեամբ հոգւոյս՝ խորամանկութեամբ,
անզգամութեամբ, յանդգնութեամբ և երկչոտութեամբ,
շռայլութեամբ և ժլատութեամբ, գեղխութեամբ և ա-
նիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատու-
թեամբ և թերամտութեամբ, մեղայ Աստուծոյ:

Մեղայ եօթնից յանցանօք մահացու մեղօք՝
հպարտութեամբ և մասամբք նորին, նախանձու և մա-
սամբք նորին, բարկութեամբ և մասամբք նորին, ծու-
լութեամբ և մասամբք նորին, ագահութեամբ և մա-
սամբք նորին, որկրամոլութեամբ և մասամբք նորին,
բղշխոհութեամբ և մասամբք նորին, մեղայ Աս-
տուծոյ:

Հայր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան
և բարեխօս առ միածին Որդին Աստուծոյ, զի իշխա-

նութեամբդ, որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս ի
կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ:

1. Հպարտութիւնն է չար ախտ, որով մարդ իր
անձն ընկերներից գերազանց է համարում և այն ա-
մեն բարիքը կամ շնորհքը, որ ունի, ոչ Աստուծոց,
այլ իր անձի ընդունակութիւնից առաջացած է կար-
ծում:

Սրա հակառակ առաքինութիւնն է խոնարհու-
թիւնը, որով մարդ իր անձն ամեն բանով հաւասար
է համարում իր ընկերին և ամենայն հեղութեամբ
վերաբերում է դէպի իր ընկերը:

2. Նախանձը մի վատթար կիրք է, որով մարդ
ցաւում է, տխրում ընկերի լաւութեան և յաջողու-
թեան համար և ուրախանում է նրա անբաղդութեան
ու անյաջողութեան վրայ:

Նախանձի հակառակ առաքինութիւնն է ընկերա-
սիրութիւնը. որով մարդ ընկերի յաջողութիւնն և ձա-
խորդութիւնն իրանն է համարում ու ցանկանում է
նրա համար այն, ինչ որ ցանկանում է իր համար:

3. Բարկութիւնն է փրասակար հոգեկան յուզմունք,
որով մարդ չկարողանալով տանել մէկից կրած նեղու-
թիւնները կամ պակասութիւնները կատաղի վրէժ-
խնդրութեան ոգւով է վերաբերում դէպի նա:

Բարկութեան հակառակ առաքինութիւնն է եր-
կայնամտութիւնը, որով մարդ համբերատար ոգւով
տանում է զուր տեղից կրած նեղութիւններն և պա-
կասութիւնները:

4. Ծուլութիւնն է փրասակար ախտ, որով մարդ
իր անձնական հանգստութիւնը պաշտելով զլանում է
կատարել իր պարտաւորութիւնները:

Սրա հակառակ առաքինութիւնն է արիութիւնը, որով մարդ ոգևորուած միշտ աշխատում է կատարել իր պարտաւորութիւններն անթերի և միշտ պատրաստ և զգոյշ է պատահելի վտանգներէրից:

5. Ազատութիւնն է մի ախտ, որով մարդ թէ արդար և թէ անարդար ճանապարհներով յափշտակում է ընկերի սեպհականութիւնը, ջանք է անում միշտ աւելացնել իր սեպհականութիւններն՝ այն է աշխարհային հարստութիւններն առանց նրանցից բաժին հանելու բարեգործութիւնների համար:

Սրա հակառակ առաքինութիւնն է ողորմածութիւնը, որով մարդ զրդուած իր արդար վաստակից օգնում է կարօտեալներին և աղքատներին ու բաժին է հանում աստուածահաճոյ գործերին:

6. Որկրամոլութիւնն է մի վնասակար ախտ, որով մարդը անչափաւորութիւն է պահպանում ուտելիքի և ըմպելիքի մէջ, որ ասվում է որովայնամոլութիւն:

Սրա հակառակ առաքինութիւնն է ժուժկալութիւնը, որով մարդ չափաւորութիւն է պահում ուտելիքի, ըմպելիքի և ամենայն ախորժելի բաների մէջ:

7. Բզշախոհութիւնն է մի վնասակար ախտ, որով մարդ անճանատու է լինում անարդ կրքերին ու ցանկութիւններին:

Սրա հակառակ առաքինութիւնն է ողջախոհութիւնը, որով մարդս ազատ է պահում սիրտը վնասակար մտածմունքներից և իր անձը հեռու է պահում ~~անպիտանութիւններից~~ պատճառներից:



21
20
—
41

ՀՀ Ազգային գրադարան



NL0161352

Переплетная Г. М. Григорьева
Пятицкая, д. № 70. Тел. 22 52.